

դեկտեմբեր



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
JUSTICE

2021

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2021
N 3 (55)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հրապարակված է 21.12.2021թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Սրբուհի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալ, Արդարադատության առաջին դասի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy Prosecutor General of the Republic of Armenia coordinating the field of functions aimed at confiscation of property of illicit origin, First Rank Counsellor of Justice, PhD student of the chair of criminal law, YSU, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – Vice-rector of the Academy of Justice, PhD in Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Third Rank Counsellor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Սերգեյ Առաքելյան – «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ նեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Arakelyan – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի նեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլաճոր» համալսարանի նեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Mane” University, Doctor of Law, Professor

Արփիմեն Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyanyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Սերգեյ Հայրապետյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Sergey Hayrapetyan – Doctor of Historical Sciences, Professor

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Բեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ազդարային համալսարանի ազդրիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ Հովսեփյան – ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Mushegh Hovsepyan – Head of Chair / Faculty of Journalism- Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Արիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի ղեկավար, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդեբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյավսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskiy – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՆԻ

Մարտին Ալեքսանյան (պատասխանատու քարտուղար), Միլվա Արիստակեսյան (տեխնիկական խմբագիր), Անուշ Հայրումյան (սրբագրիչ), Սամվել Աբրահամյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի նիհիլիզմը
Հայաստանի Հանրապետությունում (1999-2006 թվականներին)

13 ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման
հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում

20 ՆԱԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Փինանսական վերահսկողությունը որպես տնտեսության օրինական
կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի իրավական միջոց

28 ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը
Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության
անկախության հաստատման վրա

35 ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական
գործունեության արդյունավետության ցուցանիշները
գիտելիքահենք տնտեսության համատեքստում

44 РУБЕН НАЛБАНДЯН

О необходимости совершенствования законодательства РА
в области оперативно-розыскной деятельности

50 ARMAN HAKOBIJANYAN

Alternative dispute resolution perspectives in the Republic of Armenia

57 РУБЕН АВАКЯН

Причины преступности в исторических и современных реалиях

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՀՀ վարչական դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԻՀԻԼԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1999-2006 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ)

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում 1999-2006 թվականներին նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի նիհիլիզմին և դրա պատճառների բացահայտմանը:

Ներկայացվում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության որոշման ինստիտուտների տարբերակումը, օրինակներ դատական պրակտիկայից, ինչպես նաև հեղինակավոր գիտնականների մոտեցումներ՝ կապված նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու դատարանների լիազորության հետ:

Անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի այն որոշմանը, որով վերջ դրվեց՝ դատարանների՝ նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելուց խուսափելու պրակտիկային:

Հիմնադրադր՝ նորմատիվ իրավական ակտ, դատական վերահսկողություն, նիհիլիզմ, սահմանադրականություն, օրինականություն, գործադիր իշխանություն, ՀՀ վճռարեկ դատարան, ՀՀ սահմանադրական դատարան:

Ընդհանուր դրույթներ

ՀՀ-ում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի կայացման ճանապարհը եղել է բարդ: Թեև այսօր այն իրողություն է, սակայն Հայաստանի Հանրապետությունում եղել է ժամանակահատված, երբ ՀՀ Նախագահի ու ՀՀ կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության գաղափարը դատարանների կողմից մերժվում էր: Դա վերաբերում է 1999-2006 թվականներին:

17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը¹) 26-րդ գլուխը վերաբերում էր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին²:

Եթե նոր Օրենսգիրքը համեմատում ենք խորհրդային Հայաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25.07.1988 թվականին

ավելացված՝ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների դեմ տրվող զանգատների գործերի վերաբերյալ 24.1-րդ գլխի հետ, ապա պարզ է դառնում, որ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում «գործողություն» հասկացության փոխարեն օգտագործվում էր «ակտ» եզրույթը, որը ավելի լայն մեկնաբանման հնարավորություն էր տալիս: Այնուամենայնիվ, նոր Օրենսգրքի 26-րդ գլխում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ բնույթի ակտերի օրինականության ստուգման մասին հատուկ կարգավորումներ նախատեսված չէր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ և 15-րդ հոդվածներում, որոնք սահմանում են քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, «նորմատիվ իրավական ակտ» ձևակերպումը նույնպես չի օգտագործվում: Նշված հոդվածներում խոսվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելու մասին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «1. Օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող և քաղաքացու կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը

դատարանով կարող է ճանաչվել անվավեր:»:

Այս պարագայում հարց էր ծագում՝ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը վերաբերում էր միայն անհատական ակտերին, թե նաև՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին:

Այս ժամանակահատվածում հրապարակված տեսական աշխատություններում, նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ վերահսկողության հարցերը ոչ միայն հատուկ ուշադրության չէին արժանանում, այլև՝ խոսվում էր կառավարման մարմինների ակտերի (վարչական ակտերի) օրինականության նկատմամբ վերահսկողության մասին՝ ստեղծելով այնպիսի տպավորություն, որ խոսքը միայն անհատական ակտերի մասին է: Օրինակ՝ Ն. Ապիյանը և Ա. Պետրոսյանը նշում են. «Նեղ առումով, դատական վերահսկողությունը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ կառավարման մարմնի ակտերը դատարանի կողմից հատուկ ուսումնասիրվում են օրինականության տեսանկյունից՝ նրանց գործողությունների օրինականության հաստատման համար շահագրգիռ անձանց և կառավարման մարմինների դիմումների հիման վրա»:՝³ Տեսաբանները մենագրության մեջ չեն հստակեցրել՝ խոսքն անհատական, թե, նաև, նորմատիվ իրավական ակտերի մասին է, սակայն նրանք հաճախ գործածում են «վարչական ակտ» հասկացությունը, որից կարելի է եզրակացնել, որ նկատի ունեն կառավարման մարմնի անհատական ակտերը:

Մինչդեռ քաղաքացիական դատավարության մասնագետները հստակ նշում էին, որ օրենսդիրը «ակտեր» ընդհանրական հասկացության մեջ ներառել է ինչպես անհատական բնույթ կրող ակտերը (գործողությունները (անգործությունը) և որոշումները), այնպես էլ նորմատիվ իրավական ակտերը⁴:

Ավելին՝ նրանք քննադատում էին օրենսդրի մոտեցումը, ըստ որի՝ 1998 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում միաբերվել են ըստ էության երկու տարբեր գործեր՝ պետական մարմինների օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու և նույն սուբյեկտների գործողությունները (անգործությունը) վիճարկելու գործերը, որի հետևանքով դատավարական կարգավորումներում շփոթություն է առաջացել: Ավելին, Ռ. Պետրոսյանը այս կապակցությամբ նշում է. «Քաղաքացու իրավունքը խախտող գործողության (անգործության) կամ որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ժամանակ դատարանի խնդիրն այլ է՝ քննության առնել գործի

լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, հետազոտել, վերլուծել և գնահատել այդ հանգամանքները հետազոտող ապացույցները, մինչդեռ նորմատիվ ակտերն անվավեր ճանաչելու գործով դատարանի գործառույթը բոլորովին ուրիշ է՝ տալ նորմատիվ ակտի իրավական գնահատականը, նրա համապատասխանությունն օրենքին, որը որևէ կապ չունի հայցվորի իրավական դիրքորոշման հետ»:՝

Ուշագրավ է այն, որ դատավարագետը այս վարույթները առանձնացնելու համար, բերում էր նաև սահմանադրական հիմնավորումներ: Նա կարծում է, որ պետական մարմինների՝ օրենքին հակասող նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելու հիմքում դրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը (1995 թվականի խմբագրությամբ), իսկ նույն սուբյեկտների գործողությունները (անգործությունը) և որոշումները վիճարկելու հիմքում դրված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը⁵: Այս մոտեցումը, որին դեռևս կանոնադաշտում, ունի սկզբունքային նշանակություն, քանի որ դրանից է բխում նաև այն հարցը, թե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը վիճարկելու գործերով, ով կարող է դիմել դատարան:

Դատավարագիտության մեջ թեև ընդգծվում էր վերը նշված երկու խումբ գործերով տարբերակված դատավարական վարույթներ նախատեսելու անհրաժեշտությունը, սակայն պատմական այս ժամանակահատվածում հիմնական խնդիրը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության վիճարկման վարույթների տարբերակումն էր, ինչպես նաև ՀՀ դատարանների կողմից ՀՀ նախագահի ու ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականության դեմ բերված դիմումները քննելուց հետևողականորեն հրաժարվելը:

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության և օրինականության որոշման ինստիտուտների տարբերակումը

1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով կարգավորվում էին պետական մարմինների օրենքին հակասող ակտերը, սակայն նշված գլխում ամրագրված էին առանձին դրույթներ, որոնք կարող էին տպավորություն ստեղծել այն մասին, թե իբրև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը «ներխուժել է» նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու տիրույթ:

Առաջին, նախատեսված էր, որ դիմումում պետք է նշվի՝ (...) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և (կամ) օրենքների ո՞ր հոդվածներին է հակասում վիճարկվող ակտը (1998 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մաս):

Երկրորդ, դատարանը դատական նիստում ստուգում է ակտն ընդունած պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի իրավասությունը, ամբողջ ակտի կամ դրա մի մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին (1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 5-րդ մաս):

Նման ձևակերպումներից, այնուամենայնիվ, չէր կարելի եզրակացնել, որ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը կոչված էր կարգավորելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության վիճարկման հարցեր: Նշված գլխում հետևողականորեն նշվում էր պետական մարմինների՝ օրենքին հակասող ակտերի մասին, իսկ 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում ուղղակի նշված էր. «Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»⁷:

Այսպիսով, հստակ էր, որ 1998 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը վերաբերում էր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականության որոշման հարցերին, մինչդեռ, ՀՀ դատարանները երկար տարիներ՝ հրաժարվում էին ՀՀ նախագահի ու կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառնությունը:

ՀՀ դատարանների հրաժարումը ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառնությանը

ՀՀ դատարանները, ընդհուպ ՀՀ վճռաբեկ դատարանը, այս ժամանակահատվածում հետևողականորեն հրաժարվում էին քննարկել այն դիմումները, որոնցով վիճարկվում էր, հատկապես, ՀՀ նախագահի ու կառավարության նորմատիվ իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանելու հարցը: Նմանատիպ մոտեցում արտահայտել էին նաև առանձին իրավաբան գիտնականներ⁸:

Մյուս կողմից՝ այլ գիտնականներ, գործադիր իշխանության մարմինների նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց՝ դատարանների հրաժարումը որակել են՝ Սահմանադրությանը հակասող: Այսպես՝ Ա. Ղամբարյանը նշել է. «Թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածում ձևակերպված իրավական նորմը տարակարծությունների տեղիք է տալիս, սակայն այսօր ՀՀ քաղաքացիները և իրավունքի այլ սուբյեկտներ գրկված չէին լինի կառավարության որոշումների օրինականությունը վիճարկելու հնարավորությունից, եթե դատական իշխանության մարմինները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի մեկնաբանման հարցում մոտենալին համակարգային տեսանկյունից՝ այն դիտարկելով ՀՀ Սահմանադրությանը երաշխավորված արդարադատության մատչելիության և դատական պաշտպանության իրավունքի համատեքստում»⁹:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ընդհանուր իրավասության դատարանները ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության կողմից ընդունված իրավական ակտերի, օրենքին համապատասխանության վերաբերյալ դիմումներին առնչվող հարցը քննելիս, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը, որպես կանոն, մերժել են դրանց քննության ընդունումը: Ձևակերպումը բոլոր դատական ակտերում գրեթե նույնն է՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»¹⁰: Նշված հիմքով ընդհանուր իրավասության դատական բոլոր ատյանների կողմից դիմումների մերժումը վկայում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության մասն ձևակերպումը դատական պրակտիկայում ընդհանրական բնույթ ունեցող դիրքորոշման ձևավորման պատճառ է դարձել: Նման իրավիճակը կարող է լոջորեն խոչընդոտել իրավունքի տարբեր սուբյեկտների՝ օրենքով պաշտպանվող ցանկացած իրավունքի խախտման դատական պաշտպանությանը (ՀՀ սահմանադրական դատարանի 26.11.2006 թվականի ՍԴՈ-665

որոշում):

Օրինակ՝ քաղաքացի Ա. Զ-ն 13.01.2006 թվականին դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ վիճարկելով ՀՀ նախագահի հրամանագրի՝ օրենքին համապատասխանության հարցը: Առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումի ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 160-րդ հոդվածի 1-ին կետով վեճը ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանը իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Համաձայն Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100-րդ հոդվածին համապատասխան և սույն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և այլ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի որոշելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է: Այսպիսով, նշված նորմերի ուժով դիմումը ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա չէ»:

ՀՀ վճռաբեկ դատարանը 24.02.2006 թվականի Ա. Զ-ի դիմումի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառնությանից հրաժարվելը Ա.Ղամբարյանը բացատրում է հետևյալ կերպ. «ՀՀ վճռաբեկ դատարանը, հանդիսանալով գոյտ երրորդ ատյանի դատարան, խիստ սահմանափակ ազդեցություն ունի իրավական քաղաքականության վրա, նրա որոշումները ինչպես օրենսդիր և գործադիր մարմինների, այն-

պես էլ դատական համակարգում չունենի քաղաքար հեղինակություն: ՀՀ վճռաբեկ դատարանը հազվադեպ էր ունակ իրեն վերապահված քաղաքական իշխանությանը ներհատուկ ուժով՝ վերահսկելու գործադիր մարմինների ակտերի օրինականությունը և դրանով իսկ հակադրվելու այդ մարմինների քաղաքականությանը: Ավելին, իշխանության այլ մարմինների հետ հակասություններից խուսափելու նպատակով, ՀՀ վճռաբեկ դատարանը դատավարական որոշ նորմերին տալով հակաիրավական, ոչ համակարգային մեկնաբանություն, հրաժարվում էր ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնել»¹⁶:

Նորմատիվ իրավական ակտերի օրինականության ստուգման դատական գործառնության կենդանացումը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից

Ընդհանուր իրավասության դատարանների կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց խուսափելու պրակտիկան շտկվեց միայն ՀՀ սահմանադրական դատարանի միջամտությունից հետո: ՀՀ սահմանադրական դատարանը 26.11.2006 թվականի ՍԴՈ-665 որոշմամբ արտահայտել է իր իրավական դիրքորոշումները, որոնք քննարկվող հարցի համար ունեն սկզբունքային նշանակություն:

Նախ՝ իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը (ՍԴՈ-665 որոշման 7-րդ կետ):

Երկրորդ՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է իրավական ակտերի նկատմամբ դատական հսկողության երկու տարատեսակ:

Առաջինը՝ սահմանադրական արդարադատությունն է, որն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանը (ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է նշված ակտերը ճանաչել որպես ՀՀ Սահմա-

նադրությանը հակասող և անվավեր:

Երկրորդն՝ ընդհանուր իրավասության դատարանների միջոցով ՀՀ իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության ստուգումն է, որն իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

Ինչպես վկայում է տարբեր երկրների իրավական ակտերի սահմանադրականության ստուգման կամ դրանց օրենքին համապատասխանության հարցին առնչվող օրենսդրության ուսումնասիրությունը. այն երկրներում, որտեղ վարչական արդարադատությունն իրականացնում է վարչական դատարանները, նորմատիվ իրավական ակտերի օրենքին համապատասխանության հարցերը քննության են առնվում այդ դատարանների կողմից, իսկ մյուս երկրներում, որտեղ նպատակահարմար չեն գտել ստեղծել նման դատարաններ, իրավական ակտերի օրենքին համապատասխանության հարցը քննության են առնում սահմանադրական կամ ընդհանուր իրավասության դատարանները: ՀՀ օրենսդրության համաձայն՝ վարչական արդարադատության իրականացման իրավասությամբ ներկայումս օժտված են քաղաքացիական գործեր քննող դատարանները և տնտեսական դատարանը (ՍԴՈ-665 որոշման 4-րդ կետ):

Երրորդ՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը, հետևաբար, նրա իրավասությունն է՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված իրավական ակտերի սահմանադրականության որոշման հարցը: Միաբանական, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ ՀՀ ազգային ժողովի որոշումների, ՀՀ նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ օրենքին համապատասխանության հարցի որոշումը ներկայումս վերապահված է ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններին (ՍԴՈ-665 որոշման 7-րդ կետ):

ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ նա ստեղծված իրավիճակը պայմանավորել է հիմնականում օրենսդրի կողմից տրված ոչ հստակ ձևակերպումներով, մինչդեռ, իրականում, նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունից հրաժարվելու հիմնական պատճառը՝ ընդհանուր իրավասության դատարանների խուսափողական քաղաքականությունն էր: Պատահա-

կան չէ, որ ՀՀ սահմանադրական դատարանը քննարկվող որոշման եզրափակիչ մասում ՀՀ Սահմանադրությանը հակասող է ճանաչել՝ ոչ թե ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը, այլև հակասահմանադրական է համարվել այդ նորմը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությունը:

1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը ուժը կորցրել է 01.01.2008 թվականին, երբ ուժի մեջ մտավ ՀՀ վարչական դատավարության առաջին օրենսգիրքը:

Եզրակացություն

Պատմաիրավական այս վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀՀ դատարանները խուսափում էին ՀՀ նախագահի ու ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելու գործառույթից, թեև 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ դատարաններին վերապահել էր այս տեսակի դատական վերահսկողության գործառույթ, սակայն նրանք դատավարական նորմերի ոչ համակարգային մեկնաբանության միջոցով խուսափում էին ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնել:

ՀՀ դատարանների, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նման զգուշավոր դիրքորոշման պատճառները փնտրելիս պետք է հաշվի առնել նաև՝ առավել ընդհանուր հարթության հարցերը, տվյալ ժամանակաշրջանի քաղաքական ռեժիմի առանձնահատկությունը, քաղաքական և դատական իշխանության հարաբերությունների արժեքաբանական առանձնահատկությունները և այլն:

Ընդհանուր իրավասության դատարանների կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը ստուգելուց խուսափելու պրակտիկան շտկվեց միայն ՀՀ սահմանադրական դատարանի կողմից (26.11.2006 թվականի ՍԴՈ-665 որոշում):

¹ Ուժը կորցրել է 09.04.2018 թվականին:

² 24.11.1999 թվականին ընդունված և 27.01.2018 թվականին ուժը կորցրած «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում սահմանված էր. «...յուրաքանչյուր քաղաքացի, իրավաբանական անձ իրավունք ունի բողոքով դիմել դատարան, եթե գտնում է, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և կազմակերպությունների անօրինաչափ գործողություններով (որոշումներով) խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները»: Նույն օրենքի 12-րդ հոդվածում սահմանված էր, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և կազմակերպությունների գործողությունների (որոշումների) դեմ քաղաքացիների բողոքները դատարանը քննարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

³ Տե՛ս, Ալիյան Ն., Պետրոսյան Ա. Իրավական պետություն և օրինականություն: 2-րդ հրատ., Եր.: 2001, էջ 212:

⁴ Տե՛ս, Պետրոսյան Ռ., Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն): Երևանի պետական համալսարան, Եր.: 2001, էջ 389:

⁵ Տե՛ս, Պետրոսյան Ռ. նույն աշխ. էջ 389:

⁶ Տե՛ս, Պետրոսյան Ռ. նույն աշխ. էջ 388:

⁷ Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանը 26.11.2006 թվականի ՍԳՈ-665 որոշմամբ նշել է, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 160-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը ձևակերպված է իրավաբանորեն ոչ հստակ, սակայն որևէ կերպ չի հստակեցրել, թե ինչումն է այդ անհստակությունը:

⁸ Տե՛ս, Դանիելյան Գ. Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը // Հայաստանի Հանրապետության դատախազությունը// Դասագիրք բուհերի համար. Երևանի պետական համալսարան, Եր.: 2004, էջ 241:

⁹ Տե՛ս, Դամբարյան Ա. Վարչական արդարադատության ինստիտուտի կայացման դատավարական և դատարանակազմական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Հայ-ռուսական համալսարան, Տարեկան գիտաժողով (28 նոյեմբեր – 2 դեկտեմբեր 2006թ.). Ռ-ՀՀ, հրատ, 2007.:

¹⁰ Տե՛ս, Դամբարյան Ա. Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (մեթոդաբանական և համատեսական հիմնախնդիրներ): Եր.: Ռ-ՀՀ, հրատ, 2013, էջ 260-261:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալիյան Ն., Պետրոսյան Ա. Իրավական պետություն և օրինականություն: 2-րդ հրատ., Եր.: 2001, էջ 212:

2. Պետրոսյան Ռ. Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում (պատմաիրավական հետազոտություն և օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն): Երևանի պետական համալսարան Եր.: 2001 թ.:

3. Դանիելյան Գ. Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը // Հայաստանի Հանրապետության Դատախազությունը: Դասագիրք բուհերի համար. Երևանի պետական համալսարան Եր., 2004թ.:

4. Դամբարյան Ա. Վարչական արդարադատության ինստիտուտի կայացման դատավարական և դատարանակազմական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Հայ-ռուսական համալսարան, Տարեկան գիտաժողով (28 նոյեմբեր – 2 դեկտեմբեր 2006թ.). Ռ-ՀՀ, հրատ, 2007թ.:

5. Դամբարյան Ա. Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (մեթոդաբանական և համատեսական հիմնախնդիրներ): Եր., Ռ-ՀՀ, հրատ, 2013թ.:

Рафик Хандянян
Судья Административного суда РА,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

*Нигилизм в отношении института судебного контроля за законностью нормативных
правовых актов в Республике Армения (1999-2006 годы)*

В статье анализируется институт судебного контроля за законностью нормативных правовых актов в Республике Армения с 1999 по 2006 год, в частности, изучаются вопросы, связанные с избеганием судами осуществления контроля за законностью нормативных правовых актов. Рассмотрены отличия законности и конституционности нормативных правовых актов, решения судов, так же отражены мнения выдающихся ученых относительно полномочий судов осуществлять контроль за законностью нормативных правовых актов в рассматриваемый период. Анализируется так же решение Конституционного суда Республики Армения, которое положило конец практике избегания судами осуществления контроля за законностью нормативных правовых актов.

Ключевые слова: нормативный правовой акт, судебный контроль, нигилизм, конституционность, законность, исполнительная власть, Кассационный суд Республики Армения, Конституционный суд Республики Армения.

Rafik Khandanyan
Judge of the Administrative Court of the Republic of Armenia
PhD in Law, Associate Professor

SUMMARY

Negation of judicial control over legality of normative legal acts in the Republic of Armenia (1999-2006)

The article analyzes the institution of judicial control over legality of normative legal acts in the Republic of Armenia from 1999 to 2006. More accurately, it reveals such questions as why Armenian judicial system avoided judicial control over legality of normative legal acts from 1999 to 2006 and was it due to the political situation in the country or not. The article reflects differences between constitutional control over normative legal acts and control over legality of normative legal acts, court's decisions and opinions of outstanding scientists on power of Armenian courts to control legality of normative legal acts. The decision of the Constitutional court of the Republic of Armenia which changed the practice of avoiding judicial control over legality of normative legal acts is also discussed in the article.

Key words: normative legal act, judicial control, nihilism, constitutionality, legality, executive power, The Supreme Court of the Republic of Armenia, The Constitutional Court of the Republic of Armenia.

Բնագիրը ներկայացվել է 03.09.2021թ.
Ընդունվել է տպագրության 18.11.2021թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Սիմոնյանը

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Փաստաբան

ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՀՀ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է դատարանների կողմից հայցի ապահովման կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցին:

Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման իրավունքը գործին մասնակցող անձի, որի դեմ անհիմն կիրառվել են հայցի ապահովման միջոցներ, իրավունքների պաշտպանության լավագույն միջոցներից է: Գտնում ենք, որ գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել են հայցի ապահովման միջոցներ, բոլոր այն դեպքերում, երբ այդպիսի կիրառումը կճանաչվի անհիմն, պետք է իրավունք ունենա ներկայացնել հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց: Հոդվածում կատարված վերլուծության արդյունքում առաջարկվել է փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հայցի ապահովումը կարգավորող հոդվածներում:

Հիմնաբառեր – հայցի ապահովում, վնասների հատուցում, քաղաքացիական դատավարություն:

Հայցի ապահովումը օրենքով նախատեսված դատավարական միջոցների համակցություն է, որի նպատակն է գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարման երաշխավորումը: Այս դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել գործին մասնակցող անձի իրավունքները և օրինական շահերը: Դրանով իսկ այն ուղղված է անձանց խախտված իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հիմնական խնդիրն, որն առաջանում է հայցի ապահովման միջոցներ կիրառելիս, գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի հավասարության պահպանումն է, քանի որ հայցի ապահովման միջոցների կիրառումը հանգեցնում է հակառակ դատավարական կողմի իրավունքների սահմանափակմանը, իսկ որոշ դեպքերում նաև՝ վերջինիս համար նյութական վնասների առաջացմանը:

Գործին մասնակցող անձը, որի դեմ անհիմն կիրառվել է հայցի ապահովում, կարող է վերականգնել իր խախտված իրավունքները՝ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելով, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված իրավունքների պաշտպանության ձևերից մեկն է: Վնասների տակ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի, հասկացվում է՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կո-

րուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը: Ըստ նույն հոդվածի 1-ին մասի՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը ևս սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ այն պատճառած անձի կողմից լրիվ ծավալով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

Հայցի ապահովման կիրառման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման իրավական կարգավորումները տրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով, համաձայն որի՝ գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսել է վնասների փոխհատուցման իրավունք նաև այն

դեպքերում, երբ այդպիսի վնասներ են առաջացել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու հետևանքով:

Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցումը հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձի շահերի պաշտպանության դատավարական միջոցներից է: Այն ավանդական է հայրենական քաղաքացիական դատավարության համար և նախատեսված է եղել դեռևս 1923թ. ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմնություններին համապատասխան ընդունված ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և դրանից հետո ընդունված բոլոր քաղաքացիական դատավարության օրենսգրքերում: Գործող օրենսդրությամբ փոփոխվել է միայն այդպիսի հայց ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, եթե նախկինում այդպիսի իրավունքով օժտված էր միայն պատասխանողը, ապա գործող օրենսդրությունը այդ իրավունքը վերապահել է բոլոր այն անձանց, որոնց դեմ կիրառվել են հայցի ապահովման միջոցներ: Օրենսդիրի նման մոտեցումը համարում ենք հիմնավոր, քանի որ նախկին քաղաքացիական դատավարությամբ սահմանված դրույթի համաձայն՝ նման հայց կարող էր ներկայացնել միայն պատասխանողը, որը խախտում էր կողմերի իրավահավասարության սկզբունքը: Օրինակ՝ իր դիմումի համաձայն՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունը ներգրավվել է որպես երրորդ անձ թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում: Հետագայում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության հանդեպ նշված գործի շրջանակներում, կիրառվել է հայցի ապահովման միջոց, որը հետագայում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներկայացուցչի միջնորդության հիման վրա վերացվել է, սակայն մինչ այդ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն դիմել է դատարան՝ ընդդեմ իր հանդեպ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրած կողմի՝ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասների հատուցման պահանջով: Դատարանը 31.07.2014թ. թիվ ԵՄԴ/1613/02/13 վճռով բավարարել է հայցը, սակայն հետագայում այս վճիռը բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից հետևյալ պատճառաբանությամբ՝ «...ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանողին է իրավունք վերապահում հարուցել հայց նույն Դատարան ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ պատճառված

վնասների հատուցման պահանջով...»¹: Այսպիսով, գործին մասնակից դարձած երրորդ անձը նախկինում գրկված էր հնարավորությունից՝ պահանջել հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասների հատուցում: Ներկայումս չկա որևէ սահմանափակում հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակում:

Սույն հոդվածում քննարկելու ենք հայցի ապահովմամբ գործին մասնակցող անձի մոտ առաջացած վնասների փոխհատուցման հետ կապված խնդրահարույց հարցերը:

Հայցի ապահովման կիրառման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման հարցը կարգավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման պարտադիր վավերապայմաններ են հանդիսանում՝

1. Հայցի ապահովման կիրառման պատճառով գործին մասնակցող անձի մոտ վնասների առկայությունը:

2. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքերով: Հայցի նախնական ապահովման կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու համար նշված իրավական հիմքերից բացի նշված է նաև այն դեպքը, երբ սահմանված ժամկետում հայցվորի կողմից հայց չի ներկայացվել դատարան:

3. Հայցի ապահովման կիրառման և վնասների առաջացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Նշված վավերապայմաններից որևէ մեկի բացակայությունը, ըստ օրենսդրի տրամաբանության, պետք է հիմք հանդիսանա հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման պահանջի մերժման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի կարգավորումները գործնականում կարող են առաջացնել հետևյալ խնդիրները.

1. Օրենսդիրը հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավունքի առաջացման համար պարտադիր է համարում դատարանի օրինական ուժի մեջ

մտած դատական ակտի առկայությունը, որով հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է: Գտնում ենք, որ այս դրույթը սահմանափակում է վնասներ կրած անձի իրավունքը ստանալ փոխհատուցում այն դեպքերում, երբ հայցի ապահովումը կիրառվել է անհիմն, սակայն չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով հայցը մերժվել է կամ թողնվել է առանց քննության կամ կարճվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով, օրինակ՝ եթե հայցի ապահովման միջոցները վերացել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով. այն է՝ եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը և հայցի ապահովման ընթացքում անձը կրել է ֆինանսական կորուստներ, ապա ըստ գործող օրենսդրության՝ այն ենթակա կլինի հատուցման միայն այն դեպքում, երբ հայցը մերժվի կամ կարճվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

Անհրաժեշտ ենք համարում փոփոխություն կատարել գործող օրենսդրության մեջ և հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական հիմքերը լրացնել հետևյալ կերպ՝ «Գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով կամ հայցի ապահովման միջոցը վերացվել է սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով»: Նշենք, որ միջազգային իրավական փորձի համեմատական վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ անձը պետք է ունենա հնարավորություն ստանալ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցում բոլոր այն դեպքերում, երբ կիրառված հայցի ապահովումը հետագայում կճանաչվի անհիմն կամ կիրառված հայցի ապահովման միջոցները դատարանի որոշմամբ կվերացվի: Այսպես օրինակ՝ Ֆինլանդիայի դատական օրենսգրքի 11-րդ բաժնի 7-րդ գլուխը նախատեսում է,

որ, եթե հայցի ապահովման միջոցի կիրառումը հետագայում ճանաչվի անհիմն, հայցի ապահովում կիրառող կողմը մյուս կողմին պարտավորվում է վճարել փոխհատուցում ցանկացած վնասի համար, որը պայմանավորված է հայցի ապահովման կիրառմամբ, ինչպես նաև կողմի կրած այն ծախսերը, որը նա կատարել է հայցի ապահովման միջոցի օրինականությունը վիճարկելու համար²: Ամերիկայի Միացյալ Նահանգներում օրենսդրական մակարդակով ամրագրված է, որ անձինք ովքեր վնաս են կրել իրենց հանդեպ հայցի ապահովման միջոցներ կիրառելու հետևանքով, իրավունք ունեն այդ վնասների հատուցման՝ անկախ գործով կայացվող վերջնական դատական ակտի: Այսպես, հայցի ապահովման հետ կապված ընդհանուր դրույթները սահմանված են Քաղաքացիական դատավարության դաշնային կանոնների 65-րդ կանոնով: Ըստ այդ հոդվածի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող կողմը հատուցում է հակառակ կողմին բոլոր նրա ծախսերն ու վնասները, եթե նրա հանդեպ կիրառվել է անհիմն հայցի ապահովման միջոցներ: Համաձայն նույն հոդվածի՝ հայցի ապահովման միջոցները համարվում են անօրինական կիրառված. «...եթե անձը իրավունք ունենար անել այն, ինչն արգելվել է նրան անել»: Իսպանիայի քաղաքացիական դատավարության մասին օրենքի 745-րդ հոդվածով սահմանվում է, որ, եթե դատարանը որոշում է կայացնում հօգուտ պատասխանողի կամ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու և վարույթի կարճման՝ բոլոր կիրառված հայցի ապահովման միջոցները (inter partes) վերանում են, և պատասխանողի միջնորդությամբ որոշում է կայացվում, պատասխանողի կողմից հայցի ապահովման միջոցների կիրառման հետ կապված՝ կրած ցանկացած վնասների վերաբերյալ⁴: Այսպիսով, այս պետությունների քաղաքացիական դատավարության օրենսդրության ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու համար պարտադիր վավերապայման է համարվում հայցի ապահովման կիրառման անհիմն ճանաչվելը, սակայն ոչ հայցապահանջի մերժումը:

2. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը⁵: Մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է, որ ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով, ընդհանուր առմամբ վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է պատասխանող կողմը⁶։ Նշված որոշումները չեն վերաբերում հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման գործերին, սակայն դատարանները հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցապահանջներ քննելիս, ևս ղեկավարվում են նշված նախադեպային որոշումներով։ Այսպես, ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԱԲԴ/2268/02/13 քաղաքացիական գործն ըստ հայցի Գ.Ալիբեկյանի ընդդեմ «Վահմեր» ՍՊԸ-ի, հանգել է այն եզրակացության, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի և 1058-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ. «...վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը։ Ընդ որում՝ նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման»⁷։ Տվյալ պարագայում, հարց է առաջանում՝ արդյոք դատարանների նման մոտեցումը համապատասխանում է օրենքին, ի՞նչ փաստեր են ենթակա ապացուցման հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցերի քննության ժամանակ, և ինչպե՞ս է բաշխվում գործին մասնակցող անձանց միջև այդ փաստերի ապացուցման բեռը։ Ըստ գործող ընդհանուր կանոնի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով։ Այսպիսով, ակնհայտ է, որ հայցվորը պետք է ապացուցի իր մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայու-

թյունը, վնասների և հայցի ապահովման միջոցների կիրառման պատճառահետևանքային կապի առկայությունը։ Ինչ վերաբերում է վնաս պատճառողի արարքի անօրինական լինելու հանգամանքի ապացուցմանը, ապա տվյալ պարագայում, այն ենթակա չէ քննարկման, քանի որ պատճառված վնասը հետևանք է դատական ակտի կատարման։ Այս առումով պետք է արձանագրել, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը համակարգային կապի մեջ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ օրինաչափ գործողություններով պատճառված վնասը հատուցվում է օրենքով նախատեսված դեպքերում։ Ինչ վերաբերում է վնաս պատճառողի մեղքի առկայության կամ բացակայության հանգամանքի ապացուցմանը, ապա տվյալ պարագայում, այդ հարցը ևս ենթակա չէ քննարկման, քանի որ վնասը պատճառվել է ոչ թե հալածօրինական գործողությունների, այլ օրինաչափ գործողությունների հետևանքով։ Նմանատիպ կարծիք են արտահայտում նաև հայ և ռուս դատավարագետները, որոնք նշում են, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցի քննության շրջանակներում ապացուցման առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ հաշվի չի առնվում հայցվորի մեղավորության փաստը։ Նշվածի պատճառն այն է, որ վնասի հատուցման հայց ներկայացնելու իրավունքը առաջանում է օրենքի ուժով⁸։ Այսպիսով, հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման գործերով հայցվորի կողմից ապացուցման են ենթակա միայն՝ վնասների առկայության, չափի, ինչպես նաև վնասների և հայցի ապահովման միջոցների կիրառման պատճառահետևանքային կապի առկայության փաստերը։

3. Հաջորդ հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ հետևյալն է՝ արդյոք կարելի՞ է ներկայացնել հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց բոլոր այն գործին մասնակցող անձանց հանդեպ, ովքեր անհիմն միջնորդություն են ներկայացրել հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ։ Օրինակ՝ քաղաքացիական գործի շրջանակներում, եթե հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ անհիմն միջնորդություն է ներկայացնում դատախազը, և դրա հետևանքով անձը կրում է վնասներ, արդյոք նա իրավունք ունի՞ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնել, և ու՞մ դեմ է ներկայացվելու նման հայցը (ինչպես հայտնի է քաղաքացիական դատավարությունում պետական շահերի պաշտպանությանն առնչվող գործերով դատախա-

զը կարող է հայց ներկայացնել):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-1064-րդ հոդվածների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը: Դատախազը հայց ներկայացնելով և հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելով՝ հանդես է գալիս պետության անունից, պետական շահի պաշտպանության նպատակով՝ կատարելով պետության կողմից իրեն վերապահված պաշտոնական գործառնություն: Այսպիսով, հայցի ապահովմամբ անձի խախտված իրավունքները նման պարագայում ենթակա են փոխհատուցման պետական բյուջեից: Ինչպես դատախազի դեպքում, ով քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս որպես պետության ներկայացուցիչ, այնպես էլ լիազորագրով քաղաքացիական դատավարությունում հանդես եկող գործին մասնակցող ներկայացուցչի դեպքում, հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման հայցը ներկայացվում է ոչ թե ներկայացուցչի այլ՝ գործին մասնակցող անձի դեմ: Ուստի, գործին մասնակցող անձի իրավունքների պաշտպանության նպատակով, առաջարկում ենք փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասում, լրացնելով այն հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունքը, որպես **ներկայացուցչի հատուկ լիազորություն**, որի մասին լիազորագրում պետք է լինի ուղղակի նշում:

4. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարող է, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով, գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել՝ արգելափակել ստեղծագործությունների, տվյալների բազաների, հնչյունագրերի կամ տեսագրությունների ենթադրվող նմանակված բոլոր օրինակների, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա, արգելել որոշակի գործողությունների կատարումը: Այսպիսով, այս օրենքը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասին, որը հայցի ապահովման միջոցների կիրառում թույլատրում է միայն գործին մասնակցող անձանց միջնորդության հիման վրա: Տվ-

յալ պարագայում, հեղինակային իրավունքի վեճերի քննության ժամանակ օրենսդիրը թույլատրում է հայցի ապահովման կիրառում նաև դատարանի նախաձեռնությամբ: Հարց է առաջանում՝ եթե անձը կրել է վնասներ դատարանի նախաձեռնությամբ իր հանդեպ կիրառված հայցի ապահովման հետևանքով, ապա ում դեմ է ներկայացվելու վնասների հատուցման հայցը: 1964 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը պարունակում էր դրույթ, համաձայն որի՝ եթե հայցի ապահովումը կիրառվել է դատարանի նախաձեռնությամբ, ապա այս դեպքերում անձը չի կարող ներկայացնել հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց: Նշվածը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ըստ այդ օրենսգրքի հայցի ապահովում կարող էր կիրառվել նաև դատարանի նախաձեռնությամբ: Հակասություններից խուսափելու, հայցի ապահովման կիրառման հարցերում միասնական մոտեցում ձևավորելու նպատակով, հետևելով քաղաքացիական դատավարության դիսպոզիտիվության սկզբունքին՝ առաջարկում ենք փոփոխություններ կատարել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում՝ **վերացնելով դատարանի նախաձեռնությունը հայցի ապահովման կիրառման հարցում:**

Այսպիսով, սույն հոդվածում քննարկեցինք կիրառված հայցի ապահովման դեմ պաշտպանության իրավունքներից մեկը՝ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավունքը: Գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, հատկապես, եթե ներկայացվել է անհիմն հայց, հայտնվում է դատավարության մյուս մասնակիցների հանդեպ անբարենապաստ վիճակում, քանի որ հայցի ապահովման կիրառումը կապված է նյութաիրավական սահմանափակումների հետ, ինչի պատճառով անձը կարող է կրել նյութական վնասներ: Հայցի ապահովման միջոցներ կիրառելիս գործին մասնակցող անձի շահերի պաշտպանությունը կարող է իրականացվել հետևյալ դատավարական միջոցների շնորհիվ՝

1. հայցի ապահովման վերացում,
2. հակընդդեմ ապահովում,
3. հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցում,
4. հայցի ապահովման վերաբերյալ դատական ակտերի բողոքարկում:

Նշված միջոցները կոչված են ապահովել դատավարության իրավահավասարության սկզբունքը, որը բխում է ՀՀ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքի 11-րդ, 13-րդ հոդվածներից, համաձայն որոնց՝ գործին մասնակցող բոլոր անձինք հավասար են օրենքի և դատարանի առջև: Նշված դատավարական նորմերը համապատասխանում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածին, որոնք ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ևս հանդիսանում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցումը անհիմն հայցի ապահովման միջոցների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման կարևորագույն իրավունքն է, որը թեպետ հազվադեպ է կիրառվում գործին մասնակցող անձանց կողմից: Հնարավոր է, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման իրա-

վունքից չօգտվելը կապված է այս ոլորտում լայնածավալ ուսումնասիրությունների և դատական պրակտիկայի միասնականության բացակայությամբ:

Մեր համոզմամբ, սույն հոդվածում կատարված ուսումնասիրության արդյունքում առաջադրված օրենսդրական առաջարկները, ինչպես նաև մեկնաբանությունները իրական հնարավորություն կստեղծեն իրավակիրառողների համար հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցի ներկայացնելու իրավունքից ավելի հաճախ օգտվելու համար, ինչը և կնպաստի դատավարության մասնակիցների իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ամրապնդմանը ՀՀ քաղաքացիական դատավարությունում:

¹ Տե՛ս, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2015 թ. որոշումը թիվ ԵՄԴ/1613/02/13 քաղաքացիական գործով: https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1734/en17340004_20150732.pdf

² Տե՛ս, Ֆինլանդիայի դատավարության օրենսգիրք: Code of Judicial Procedure (1734).

³ Տե՛ս, ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոններ: Federal Rules of civil procedure. <https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Law%2012000%20of%207%20January.pdf>

⁴ Տե՛ս, Իսպանիայի քաղաքացիական դատավարություն: Spanish Civil Procedure Act.

⁵ Տե՛ս, Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀԲԴ-3/0016/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

⁶ Տե՛ս, «Մասնա-Մանան» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Դանիել Ղասաբօղլյանի՝ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009թ. թիվ ԵԲԴ/0086/02/08 որոշումը:

⁷ Տե՛ս, թիվ ԵԱԲԴ/2268/02/13 քաղաքացիական գործի նյութեր:

⁸ Տե՛ս, Ս. Մեդրյան Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, էջեր 29-30: Медведев И.Р. О возмещении убытков, причиненных обеспечением иска // Арбитражный и гражданский процесс. 2015. N 8. С. 39-40.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:
3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների համընդհանուր հռչակագիր:
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
6. 1923 թ. ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
7. Հայկական ՍՍՀ 1964 թ. քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
8. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
9. Ֆինլանդիայի դատավարության օրենսգիրք Code of Judicial Procedure (1734):
10. Դատավարության օրենսգիրք: Code of Judicial Procedure (1734).
11. ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոններ: Federal Rules of civil procedure.
12. Ս. Մեդրյան Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020:
13. Медведев И.Р. О возмещении убытков, причиненных обеспечением иска // Арбитражный и гражданский процесс. 2015. N 8:

Լուսինե Տարգսյան
Адвокат

РЕЗЮМЕ

*Вопросы возмещения убытков причиненных обеспечением
иска в гражданском судопроизводстве РА*

Статья посвящена вопросу возмещения ущерба, причиненным обеспечением иска.

Право на возмещение ущерба, причиненного обеспечением иска, является одним из лучших средств защиты прав лица, участвующего в деле, к которому необоснованно применены меры по обеспечению иска. Считаем, что лицо, участвующее в деле, к которому применены меры по обеспечению иска, во всех случаях, когда такое применение признано необоснованным, должно иметь право предъявить иск о возмещении убытков, причиненных обеспечением иска. В результате проведенного анализа в статье было предложено внести изменения в статьи Гражданско-процессуального кодекса Республики Армения, регулирующие обеспечение иска.

Ключевые слова: обеспечение иска, возмещение убытков, гражданский процесс.

Lusine Sargsyan
Advocate

SUMMARY

*The issues of compensation for damages caused by usage
of provisional remedy in civil procedure code*

The article is devoted to the issue of compensation for damage caused by the usage of provisional remedies by the courts. The right of persons participating in the case for compensation for damages which is caused by the usage of provisional remedies against whom was unjustly used provisional remedy is one of the best methods to protect rights.

We consider that the person participating in the case against whom was used provisional remedies, when that kind of usage will be recognized as unjust in all cases should have the right to file a claim of compensation for damages caused by the usage of provisional remedies.

Key words: provisional remedy, compensation for damage, civil procedure.

Բնագիրը ներկայացվել է 13.08.2021թ.

Ընդունվել է տպագրության 18.11.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Դավթյանը

ՆԱԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

«Աուդիտորների Պալատ» ՀԿ, նախագահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՅԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Հոդվածում փորձ է կատարվել բացահայտել ֆինանսական քաղաքականության բովանդակությունը կազմող ֆինանսական վերահսկողության և հսկողության այնպիսի բաղադրամասեր, ինչպիսիք են՝ օրինականությունը, ֆինանսական կարգապահությունը, դրամով վերահսկողությունը, որոնք իրենց բնույթով հակակոռուպցիոն գործողությունների համալիր են և ուղղված են տնտեսության ոլորտում կոռուպցիոն դրսևորումների վերացմանը:

Հիմնաբառեր- ֆինանսական քաղաքականություն, կառավարման մեթոդ, դրամով վերահսկողություն, ֆինանսական կարգապահություն, ֆինանսական օրինականություն, կոռուպցիա, ֆինանսաիրավական խախտում, ֆինանսական հսկողություն:

Պետության ֆինանսական գործունեության բովանդակությունը կազմող ֆինանսական համակարգի իրավական ինստիտուտի յուրաքանչյուր հետազոտություն վկայում է, որ ֆինանսական քաղաքականության ճիշտ ընտրությունը պետության ինքնիշխանության և ազգային տնտեսության անվտանգության ապահովման դիրքերից էական նշանակություն է ձեռք բերում, որը հանդիսանում է պետական (քաղաքական) ռեժիմի անբաժան մասը և այսօր կարիք ունի իրավական մշակման որպես պետության իրավաստեղծ գործունեության կատարելագործման ժամանակակից պահանջ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ «ֆինանսական քաղաքականություն» հասկացությունը և դրա բովանդակության օրենսդրական ամրագրումները միշտ էլ եղել է իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում:

Ֆինանսական քաղաքականության բովանդակությունը կազմող առանձին տարրերն, ըստ էության, արտադրատնտեսական հարաբերությունների ծնունդ են, որոնք ունեն հանրային նշանակություն, հետևաբար ենթակա են պետական օրենսդրական կարգավորման:

Պետության ֆինանսական քաղաքականությունը տնտեսական քաղաքականության միջուկն է: Ավելին, ֆինանսական քաղաքականության իրականացման միջոցով են դրսևորվում պետության տնտեսական քաղաքականության արդյունքները:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն պետության ֆինանսական քաղաքականության մի քանի բնորոշումներ: Առանձին հեղինակներ «ֆինանսական քաղաքականությունը» ներկայացնում են որպես. «... ֆինանսական հարա-

բերությունների գործարկմանն ուղղված պետական միջոցառումների ամբողջություն, որն իրականացնում է պետությունն իր գործառնությունները կատարելու համար:»¹: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ «ֆինանսական քաղաքականություն»-ն իրենից ներկայացնում է՝ որպես պետական ֆինանսական ռեսուրսների կազմավորմանն ու ֆինանսավորմանն ուղղված հարկաբյուջետային և այլ ֆինանսական գործիքների և ինստիտուտների ամբողջություն՝ ելնելով պետության տնտեսական քաղաքականության ռազմավարական ու տակտիկական նպատակներից:»²: Գոյություն ունի նաև պետության ֆինանսական քաղաքականության ևս մեկ բնորոշում, որի հեղինակներն այն ներկայացնում են որպես. «...պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղադրիչ, որի միջոցով ապահովվում է ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռված աճ երկրի ֆինանսական համակարգի բոլոր օղակներում:»³:

Մեր կարծիքով՝ վերոհիշյալ բնորոշումներից և ոչ մեկը լիովին չի բավարարում մեկնաբանելու ֆինանսական քաղաքականության էությունը:

Թվում է՝ ֆինանսական քաղաքականությունը պետք է բնութագրել որպես պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության մաս, որի միջոցով ապահովվում է ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռված աճ ֆինանսական համակարգի բոլոր օղակներում: Այս բնութագրի իմաստն այն է, որ ֆինանսական քաղաքականությունը պետք է դիտել՝ որպես երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղադրիչը, որը ֆինանսական ռեսուրսների աճի ապահովման միջոց է քաղաքականությունից բխող խնդիրների լուծման համար: Պետական ֆինանսական քաղաքականության հիմ-

նական առանցքը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բավարար պայմանների ապահովումն է, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

ՀՀ ֆինանսական համակարգի առանցքային օղակների տնտեսական և իրավական կարգավորման ոլորտների հիմնարար դրույթների վերլուծությունները հուշում են, որ դրանցից յուրաքանչյուրն ունի այդ նպատակի համար կյանքի կոչված պետական մարմինների համակարգ, որոնց միջոցով գործնականում կազմակերպվում է ֆինանսական համակարգի հիշատակված ոլորտների պետական կառավարումը և ապահովվում արդյունավետ ֆինանսական հսկողություն և վերահսկողություն:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսական համակարգի պետական վերահսկողություն կազմակերպող և իրականացնող մարմինների համակարգին և կարգավիճակի իրավական առանձնահատկությունների լուսաբանմանը՝ (հիմք ընդունելով հիմնախնդրի արդիականությունը տնտեսության կառավարման ոլորտում) որպես ֆինանսական և ֆինանսական պատասխանատվության քաղաքականության խնդիրների գործնական ապահովման իրավական մեթոդ հետազոտվում են ֆինանսական վերահսկողության առանցքը կազմող տնտեսվարման ոլորտում օրինականության և ֆինանսական կարգապահության սկզբունքների պահանջների հետևողական վերլուծությունները, որոնց արդյունքում ֆինանսական վերահսկողության ճանապարհով բացահայտվում են բազմաբնույթ ֆինանսական խախտումներ, մշակվում՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոցներ:

Պետության ֆինանսական գործունեության ոլորտներում, օրինականության անշեղորեն կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է որոշակի միջոցառումների համակարգ, որը կոչված է երաշխավորելու օրինականության իրագործումը:

Առանց այդպիսի գործունեության երաշխիքների օրինականությունը սուկ դատարկ խոսք է, ոչ թե իրական ցանկություն: Միայն որոշակի երաշխիքների (տնտեսական, քաղաքական, գաղափարական, իրավաբանական և հասարակական) համակարգի առկայությունը հիմք է տալիս խոսելու պետության ֆինանսական գործունեության մեջ իսկական օրինականության ռեժիմի գոյության մասին, ըստ որի, օրինականության ապահովման այդ երաշխիքները պետք է գործեն սերտ կապի և փոխադարձ կախվածության մեջ՝ օրգանապես լրացնելով մեկը մյուսին³:

ՀՀ ֆինանսական գործունեության արդի փուլում օրինականությանը բնորոշ են երաշխիքների

առավել խորացումը և զարգացումը:

Պետության ֆինանսական գործունեության մեջ օրինականության ապահովման երաշխիքների հարցը կարելի է քննարկել առավել լայն պլանով: Լայն առումով օրինականության ապահովման երաշխիքների թվին են պատկանում կյանքի օբյեկտիվ իրականության գործոնները՝ պետական և հասարակական կարգը, որոնք ապահովում են պետական մարմինների գործունեության ու օրենսդրության համապատասխանությունը ժողովրդի կամքին և շահերին, նրա նյութական ապահովվածությունը, ժողովրդի բարոյաքաղաքական միասնության ամրապնդումն ու մարդկանց գիտակցության բարձրացումը և այլն:

Մեր հասարակական կյանքի և պետականաշինության բոլոր գործոնները անշեղորեն ապահովում են օրինականության ամրապնդումը: Դրա հետ մեկտեղ՝ այդ օբյեկտիվ գործոնների առկայությունը ինքնին չի լուծում օրինականության ապահովման խնդիրները, նրա ընդհանուր պահանջը ֆինանսների ոլորտում: Օրինականության գլխավոր և ամենից ընդհանուր պահանջը օրենքների և նրանց հիման վրա հրատարակվող մյուս իրավական պահանջների կատարումն ու պահպանումն է:

Գործնական կյանքը ցույց է տալիս, որ օրինականության ապահովման համար անհրաժեշտ են նաև հատուկ միջոցներ, որոնք ընդգրկում են որոշակի մարմինների և պաշտոնատար անձանց գործունեությունը:

Օրինականությունը պետության ֆինանսական գործունեության ոլորտում ապահովվում է պետական և հասարակական վերահսկողությամբ, դատախազական հսկողությամբ, դատական մարմինների գործունեությամբ և այլ միջոցներով:

Օրինականության ապահովման այս եղանակները իրենց բնույթով կազմակերպական-իրավական են, քանի որ օրինականության ապահովման գործով, տվյալ դեպքում, որպես կանոն, զբաղվում են հատուկ պետական մարմինները, որոնք իրավասու են՝ վերացնել անօրինական ակտերը, կասեցնել դրանք, բողոքարկել դրանց դեմ և այլն:

Օրինականության ապահովման այդպիսի կազմակերպական-իրավական եղանակներն ամբողջ պետական գործունեության մասշտաբով ըստ էության պետական ու հասարակական վերահսկողությունն են (իրենց բազմաթիվ ձևերով ու տեսակներով) և դատախազական հսկողությունն է:

Իրավաբանական գրականության մեջ կազմակերպական-իրավական այդ միջոցներն ընդունված է կոչել՝ օրինականության ամրապնդման եղանակներ⁴: Դրանց մեջ կարելի է տարբերել ֆինանս-

սական վերահսկողության և հսկողության պետական-իրավական և հասարակական-կազմակերպական եղանակներ:

Օրինականության ապահովման պետական-իրավական եղանակները հիմնականում հատուկ են պետական մարմիններին, օժտված են իրավական իշխանության լիազորություններով: Պետական իշխանության և կառավարման մարմինների կողմից նման լիազորություններով օժտվում են նաև որոշ հասարակական կազմակերպություններ:

Այդ եղանակներից յուրաքանչյուրն ամրապնդված է համապատասխան իրավական նորմերով և իրականացվում են հատուկ մեթոդներով⁵:

Պետական մարմինները, ինչպես էլ նրանց աշխատանքը կազմակերպվի, ի վիճակի չեն լիակատար ձևով ապահովելու ամենօրյա և սիստեմատիկ վերահսկողություն պետության ամենատարբեր ֆինանսական գործառնությունների օրինականության նկատմամբ, այդ իսկ պատճառով էլ պետության նյութական և ֆինանսական միջոցների ծախսերի օրինականության ապահովմանը ակտիվ մասնակցություն են ունենում հասարակական կազմակերպություններն ու քաղաքացիները:

Պետության ֆինանսական գործունեության ոլորտում օրինականության ապահովման բարդությունը, նրա ծավալի մեծությունը և իրականացման եղանակների բազմազանությունը նախ և առաջ պայմանավորված են՝ պետական կառավարման մասշտաբով, մեր պետականության զարգացման ներկա ժամանակաշրջանի տնտեսության և սոցիալ-մշակութային, շինարարության ոլորտների ղեկավարման ու կառավարման գործի բարդությամբ, պետական բյուջեի եկամուտների և ծախսերի հավաքման և բաշխման կարգը սահմանող օրենսգրքի (բյուջետային) բացակայությամբ:

ՀՀ շուկայական տնտեսության զարգացման արդի ժամանակաշրջանը պահանջում է պետության ֆինանսական գործունեության ոլորտում առավել կատարելագործել օրինականության ապահովման եղանակները, քանի որ օրինականության ճիշտ կազմակերպումը ֆինանսական կարգապահության ամրապնդման և կառավարման ոլորտի յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվության բարձրացման կարևոր պայմանն է:

Ներկա պայմաններում պետական ֆինանսների ոլորտում օրինականության խստագույն պահպանության համար պայքարելը սերտորեն կապված է պետական ապարատի գործունեության հետագա կատարելագործման, պետության տնտեսական դերի բարձրացման, քաղաքացիների իրավունքների և շահերի իրական երաշխիքների ուժե-

ղացման հետ:

Օրինականության ամրապնդումը միայն պետական ապարատի խնդիրը չէ: Հասարակական-քաղաքական կազմակերպությունները պարտավոր են ամեն ինչ անել՝ օրենքների խստիվ կիրառման, աշխատավորների իրավական դաստիարակության բարելավումն ապահովելու համար: Իրավունքի, օրենքի նկատմամբ հարգանքը պետք է յուրաքանչյուր մարդու անձնական համոզմունքը դառնա: Անհանդուրժելի են օրենքից նահանջելու կամ այն շրջանցելու ամեն տեսակ փորձերը, ինչով էլ դրանք պատճառաբանվեն: Անհանդուրժելի են նաև անձի իրավունքների խախտումները, քաղաքացիների արժանապատվության ոտնահարումը:

Պետության ֆինանսական գործունեության մեջ օրինականության ապահովումը պահանջում է համապատասխան մարմինների և նրանց անձնակազմի ակտիվ գործունեության իրականացում: Հետևաբար, ֆինանսական գործունեության օրինականության ապահովման եղանակը նախ և առաջ գործունեություն է, այն չի կարող արտահայտվել անգործության ձևով: Այդ գործունեության նպատակն է՝ նախազգուշացնել օրինականության խախտման մասին, բացահայտել խախտումը և հասնել խախտված օրինականության վերականգնմանն ու պատժել իրավախախտներին:

Պետության ֆինանսական գործունեության մեջ օրինականության ապահովումը կենսագործում է ֆինանսական վերահսկողության, կատարման ստուգման, հսկողության և հրահանգավորման ձևերով:

Ֆինանսական վերահսկողությունը կառավարման կատեգորիաների համակարգում բազմիմաստ հասկացություն է: Այն կառավարման հիմնական գործառնություններից մեկն է, որը և հանդիսանում է որպես կառավարման մեթոդ: Վերահսկողությունը իրենից ներկայացնում է կառավարման գործընթացի փուլերից մեկը և հանդես է գալիս որպես պետական կարգապահության և օրինականության ապահովման եղանակ:

Վերահսկողությունը ֆինանսավարկային մարմինների ողջ կազմակերպական գործունեության բաղկացուցիչ տարրն է և նրանց խնդիրների և գործառնությունների իրականացման միջոցը:

Ֆինանսական վերահսկողության գործունեության բովանդակությունն է հանդիսանում հետևել կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի ձևավորման գործընթացին, բացահայտել դրանց գործունեության համապատասխանությունը հասարակությանն առաջադրված ռեժիմին, այդ նպատակով կառավարող սուբյեկտների

համար ձեռք բերել տվյալներ օբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանության կամ անհամապատասխանության մասին, բացահայտել բյուջետային, վարկային, արժութային և ֆինանսական գործունեության անհամապատասխանության պատճառները:

Ֆինանսական վերահսկողության նպատակը ոչ միայն թերությունները գրանցելն է, այլև ակտիվ գործունեություն ծավալելը այդ թերությունների պատճառների բացահայտման և դրանց վերացման համար:

Որպես պետական ֆինանսական կառավարման գործընթացի բաղկացուցիչ մաս, վերահսկողությունն իրենից ներկայացնում է որոշակի համակարգ, որը բաղկացած է որոշակի տարրերից: Վերահսկողության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ երեք փուլերը՝ առաջին՝ գրանցում, այսինքն սուբյեկտի փաստացի վիճակի սահմանում, երկրորդ՝ վերլուծության ենթարկում, այսինքն օրենքի պահանջը և թույլ տրված ֆինանսական շեղումների էական և ոչ էական լինելու համեմատություն, և վերջապես՝ պետության ֆինանսների կառավարման գործընթացի բարելավման համար միջոցառումների մշակումը:

Վերահսկողության բովանդակության այսպիսի ըմբռնումը հնարավորություն է տալիս ճիշտ որոշել պետության ֆինանսական գործառնությունների տեղը կառավարման մյուս գործընթացների մեջ և նրա նշանակությունը պետական ֆինանսների կառավարման գործառնությունների բարելավման համար:

Կարծում ենք ֆինանսական վերահսկողությունը պետք է բանաձևել՝ «որպես պետական, ինչպես նաև սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված կազմակերպությունների դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման նպատակահարմարության և օրինականության ապահովման նկատմամբ իրականացնող գործունեություն, որն ուղղված է տնտեսության արդյունավետ զարգացմանը և ժողովրդի բարօրության ապահովմանը»:

Ֆինանսական վերահսկողության ոլորտի մեջ են մտնում նաև նյութական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման վրա իրականացվող գործողությունները, քանի որ շուկայական հարաբերություններում դրամը պահպանում է իր դերը:

Ինչ վերաբերում է ֆինանսական հսկողությանը, ապա վերջինս կոչված է լուծելու երկու հիմնական խնդիրներ՝

ա) ապահովել օրինականության պահպանու-

մը ֆինանսական գործունեության ընթացքում,

բ) հասնել այն բանին, որ կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը համապատասխանի ոչ միայն օրենքին, այլև իր էությանը կրի ամենից առավել արդյունավետ և նպատակային բնույթ:

Ֆինանսական հսկողությունը, կարելի է բնութագրել որպես հսկողություն պետական դրամական միջոցների պլանային հաշվառման, բաշխման և օգտագործման գործընթացում կատարվող բոլոր միջոցների օրինականության և նպատակայնության վրա: Այլ խոսքով՝ ֆինանսական վերահսկողության և հսկողության հիմքում ֆինանսական կարգապահությունն է:

Ֆինանսական կարգապահության հիմնական պահանջներն են՝ ապահովել օրինականության պահպանումը ֆինանսական գործունեության մեջ, հասնել այն բանին, որ բոլոր կազմակերպություններն ու քաղաքացիները կատարեն պետական և մունիցիպալ ֆինանսների ոլորտի բոլոր օրենքների պահանջները, որոշումները, կարգադրությունները, թույլ չտան ֆինանսական կարգապահության խախտում: Ֆինանսական կարգապահության բովանդակությունը կազմող պահանջները հիմնականում հանգում են հետևյալին.

1. Բոլոր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից բյուջե վճարումներ կատարելու պարտականությունները կատարվեն ժամանակին և լրիվ:

2. Կազմակերպությունների և հիմնարկների բյուջետային և սեփական միջոցների ծախսումը իրականացնել խիստ նպատակային կարգով՝ ֆինանսական մարմնի կողմից սահմանված շրջանակներում, ըստ պլանների քանակական ու որակական ցուցանիշների փաստացի կատարողականի, առավել տնտեսամամբ ու արդյունավետությամբ:

3. Բանկային վարկերի խստիվ նպատակային օգտագործումը և դրանց ժամանակին ու լրիվ մարումը:

4. Կազմակերպությունների միջև դրամական հաշվարկների կատարման կարգի խստիվ պահպանումը:

5. Բոլոր պետական մարմինների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց կողմից հավաքվող կանխիկ դրամի լրիվ և ժամանակին հանձնումը բանկային հաստատություններին և կազմակերպության դրամարկղեր:

Ֆինանսական գործառնությունների նպատակայնությունը բացի այս եղանակներից, ապահովվում է նաև դրամով վերահսկողության միջոցով:

Դրամով վերահսկողությունը դա կազմակեր-

պությունների տնտեսական-ֆինանսական գործունեության հսկողությունն է, այնպիսի արժեքային կատեգորիաների օգնությամբ, ինչպիսիք են վարկը, շահույթը, ինքնարժեքը, գինը և այլն:

Սրա համար բազա է հանդիսանում տնտեսական կազմակերպությունների գործունեության իրականացման մեթոդը՝ առևտրային հաշվարկը:

Դրանով վերահսկողությունը մի կողմից նպատակ ունի բացահայտել աշխատանքի արդյունքները և որակը, մյուս կողմից՝ ներագդել կազմակերպության և նրա աշխատողների վրա՝ թերությունները վերացնելու նպատակով: Դրանով վերահսկողության համար նախադրյալ է հանդիսանում այն հանգամանքը, որ դրամական մուտքերը սառեցվում են կազմակերպության կողմից պլանի քանակական և որակական ցուցանիշների կատարմանը զուգընթաց: Այն դեպքում, երբ հաշվակները աշխատողների հետ՝ բյուջե կատարվող վճարումները, բանկային վարկերի վերադարձն ըստ օրացուցային պլանի ժամկետավորվում է, կազմակերպության հաշիվներում դրամական միջոցների բացակայության պատճառով, որը տեղիք է տալիս տարբեր բնույթի պարտքերի գոյացման համար (բանկորներին ու ծառայողներին պարտք մնալը, բյուջե ժամանակին վճարումներ չկատարելը, բանկային վարկերը ժամանակին չվերադարձնելը, մատակարարների հետ ժամանակին հաշվարկները չկատարելը) ահագանգ են կազմակերպության գործունեության անբավարար վիճակի մասին և առաջ են քաշում ֆինանսական վիճակի բարելավման նպատակով գործնական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն:

Ներկա հասարակական կյանքում հաշվառումն ու վերահսկողությունը դեռևս բնորոշվում են տնտեսական օրենքների պահանջներով:

Հաշվառումը տնտեսության համաչափ զարգացման գործոններից մեկն է: Վերահսկողությունը անհրաժշտ է, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե որքանով է արտադրությունը համապատասխանում տնտեսական պլաններին և խնայողության ռեժիմի պահանջներին:

Շուկայական հարաբերություններում դրամը, ինչպես հայտնի է, աշխատանքի ծախսումների ըստ քանակի ու որակի հաշվառման և հասարակական արդյունքի բաշխման համապարփակ ձևն է:

Հաշվառումը և վերահսկողությունն անհրաժեշտ են ոչ միայն նյութական արտադրության մեջ նյութական և դրամական միջոցների ծախսման գործում, այլև ամբողջ հասարակական կյանքում:

Ֆինանսական վերահսկողության միջոցով է իրագործվում սեփականության ձևերի պաշտպա-

նությունը, ֆինանսական-բյուջետային, հարկային կարգապահության ամրապնդումը, հասարակության նյութական միջոցների խնայողությունը: Ֆինանսական վերահսկողության նշանակությունն առանձնապես մեծանում է ժամանակակից հասարակության կառուցման գործընթացներում:

Հայաստանի Հանրապետությունում հասարակությունն ունի համաժողովրդական ֆոնդեր, ուստի մեծանում է հաշվառման ու վերահսկողության դերը ազգային հարստության պահպանման և ճիշտ օգտագործման գործում: Ժողովրդին պատկանող յուրաքանչյուր դրամի խնայողաբար, ռացիոնալ օգտագործումը, միջոցների հմտորեն ծախսումը, ճիշտ կազմակերպված ղեկավարության և տնտեսվարության մեթոդների անշեղորեն բարելավումը (կազմակերպական և գիտակցական) օրինականության և կարգապահության բարձրացումը, ժողովրդական նախաձեռնության զարգացումը հասարակական արտադրության արագացման հզոր աղբյուրներ են, որոնք նպաստում են կոռուպցիայի և կաշառքի փաստերի բացահայտմանը և անողոր պայքարի կազմակերպմանը:

Տնտեսության բնագավառում իրագործվող ֆինանսական վերահսկողությունը բազմաձև է. նրա մեթոդներով ստուգման են ենթարկվում առևտրահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական պլաններն ու բյուջետային կազմակերպությունների նախահաշիվները, որպեսզի թույլ չտրվեն, որ աննպատակահարմար բարձրացված ծախսեր ու նվազեցված եկամուտներ լինեն, ինչպես նաև պարզվում է, թե արդյոք հաշվի առնվել են եղած արտադրական հնարավորությունները: Տնտեսական տարվա ընթացքում կազմակերպություններում վերահսկման է ենթարկվում նաև արտադրական ծրագրերի կատարումը, թողարկվող արտադրանքի ինքնարժեքի, շահույթի, բյուջե կատարվելիք վճարումների պլանները: Ստուգման են ենթարկվում նաև խնայողության ռեժիմի պահպանումը, թե որ չափ նպատակահարմար են օգտագործվում բյուջետային ու սեփական միջոցները, նյութական արժեքների օգտագործումն ու պահպանումը:

Ֆինանսական վերահսկողության մեջ է մտնում նաև տարբեր ֆոնդերի, ինչպես նաև փոխառու միջոցների օգտագործման ստուգումը, տնտեսության ներքին ռեզերվների բացահայտումը, նրանց օգտագործումը, արտադրության աճի և կուտակումների մեծացման համար: Ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումները, այլև կանխ-

վում են այդ խախտումները, նախատեսվում են տնտեսվարման կատարելագործման նոր ուղիներ:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողությունը կարևոր լծակ է նյութական և դրամական միջոցների արդյունավետ և խնայողաբար օգտագործման, կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի սոցիալ-տնտեսական ծրագրերով նախատեսվող առաջադրանքների կատարման համար:

Լավ կազմակերպված, բազմակողմանի ֆինանսական վերահսկողությունը բարձրացնում է յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվությունն իր տեղամասի աշխատանքի համար, նպաստում արտադրական և տնտեսական ծրագրերի կատարմանը:

Ֆինանսական վերահսկողության հետ անխզելիորեն կապված է բոլոր կազմակերպությունների կողմից պետական կարգապահությանը և կառավարության կողմից ընդունված որոշումներն ու սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը կատարելու պահանջը:

Մասնավոր սեփականությունը և շուկայական հարաբերությունները օբյեկտիվորեն պայմաններ են ստեղծում ֆինանսական վերահսկողության դերի և նշանակության սահմանափակումների համար, քանի որ ինչպես նյութական բարիքների արտադրության, այնպես էլ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների անմիջական վերահսկողությունը գտնվում է արտադրության միջոցների սեփականատերերի ձեռքին:

Գոյություն ունի արտադրական և առևտրական գործունեության գաղտնիություն, որը հնարավորություն է տալիս սեփականատիրոջը թաքցնել իրական եկամուտները:

Պետական և հասարակական ֆինանսական վերահսկողության աճող նշանակությունն իր օրենսդրական ամրապնդումն է ստացել հասարակական կյանքում:

Որոշված է ՀՀ վարչապետին կից վերահսկողության մարմինների ձևավորման և ստուգումների անցկացման կարգը, սահմանադրությամբ ամրագրված է ԱԺ և կառավարության լիազորությունները բյուջեի նախագծի քննարկման, նախորդ տարիների բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման ուղղությամբ:

Սահմանադրական այս լիազորությունները վկայում են պետական ֆինանսական վերահսկողության անհրաժեշտությունը ազգային պետականության ամրապնդման գործընթացում:

Այսօր, հատուկ դեր ունի ֆինանսական վերահսկողությունը պետական կառավարման բնա-

զավառում, քանի որ վերջինս իրենից ներկայացնում է ամենօրյա պետական գործունեություն, որն ընդգրկում է հասարակական կյանքի առավել կարևոր ոլորտները:

Պետական վերահսկողությունն իրականացվում է գործադիր իշխանության բոլոր ուղղություններով, նրա բոլոր մարմինների կողմից և նրանց ենթակա օբյեկտների առաջ դրված խնդիրների ամենօրյա իրագործման ընթացքում: Այն կոչվում է պետական, քանի որ իրականացվում է պետության անունից՝ համապատասխան իրավական-իշխանական լիազորություններից օգտվելով:

Ֆինանսական վերահսկողության միջոցով իրագործվում է սեփականության տարբեր ձևերի պաշտպանությունը, ֆինանսական-բյուջետային կարգապահության ամրապնդումը, հասարակության նյութական միջոցների խնայողությունը: Ֆինանսական վերահսկողության բովանդակության մեջ մտնում է բոլոր գերատեսչությունների, կազմակերպությունների և հիմնարկների արտադրատնտեսական և ֆինանսական գործունեության, պետական բյուջեի եկամուտների ու ծախսումների կատարման, ինչպես նաև պետական սոցիալական ապահովության և արտաբյուջետային այլ դրամական ֆոնդերի ստուգումը:

Ֆինանսական վերահսկողությունը պետական և հասարակական մարմինների գործունեություն է, որի էությունը կայանում է հասարակության ընդլայնված վերարտադրության պլանային համամասնությունների պահպանման նպատակով՝ կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի առաջացման և օգտագործման գործընթացների ստուգման և հիմնավորվածության մեջ:

Ֆինանսական վերահսկողության գործնական ուսումնասիրության արդյունքները առանձնահատուկ տեղ ունեն վերահսկողության մյուս տեսակների շարքում, ինչպես վերահսկողության ուղղակի օբյեկտի տեսակետից (կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի), այնպես էլ ֆինանսական վերահսկողության անմիջական նպատակների տեսակետից (հասարակական ընդլայնված վերարտադրության պլանային համամասնությունների պահպանում):

Ֆինանսական վերահսկողությունը ծնվում է արտադրական-տնտեսական հարաբերություններից: Ներկայումս, այն իրականացվում է սկզբունքորեն այլ քաղաքական ժողովրդավարական պետության նոր դերի պայմաններում: Այս հանգամանքները մատնանշում են ֆինանսական վերահսկողության արմատական բովանդակությունը: Նո-

րը դրսևորվում է գլխավորապես ոչ թե վերահսկողության կազմակերպման կարգի, այլ նրա առարկայի մեջ, որն, իր հերթին, որոշում է վերահսկողության մյուս առանձնահատկությունները, մասնավորապես՝ տարածման ոլորտը, վերարտադրության նկատմամբ ունեցած ներգործությունը, վերահսկողության դեմոկրատական բնույթը և օրինականության ապահովման նպատակով կոռուպցիայի դեմ համատարած պայքարի կազմակերպումը:

Ֆինանսական վերահսկողության հնարավորությունը ելնում է ֆինանսների հատուկ վերահսկիչ գործառնություններից, սակայն այդ հնարավորությունն ինքնին չի ծնում ֆինանսական վերահսկողություն: Այդ իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան կազմակերպական և մեթոդական պայմաններ, որոնց թվին կարելի է դասել վերահսկող հատուկ մասնագիտացված մարմինների ստեղծումը, դրանց որակյալ մասնագետներով ապահովելը, նրանց երաշխավորված իրավունքներով և պարտականություններով օժտելը:

Ֆինանսական վերահսկողության անհրաժեշտությունը ելնում է ապրանքային արտադրության շուկայական բնույթից, որը նշանակալից չափով կախված է ապակենտրոնացված դրամական ֆոնդերի լիարժեք և ճիշտ օգտագործումից: Անկախ առաջացման աղբյուրից՝ ֆինանսական հարաբերությունների յուրաքանչյուր խախտում, ըստ ծավալի և ժամանակի, բացասաբար է անդրադառնում շրջանառության վրա:

Ֆինանսական վերահսկողության իրականացումը թույլ է տալիս դրամական ֆոնդերի պլանաչափ շարժման պարբերաբար ստուգմամբ լուծել նաև նյութական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրը: Այստեղ ֆինանսական վերահսկողությունը հանդես է գալիս որպես հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման գործոն:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողությունն օրինականության ապահովման և կոռուպցիայի դեմ պայքարի այնպիսի ձև է, որը հնարավորություն է տալիս պետության ֆինանսական գործունեության ոլորտում ակտիվորեն միջամտել ֆինանսների պետական կառավարման ոլորտին՝ օրինականության խախտման և դրան նպաստող պայմանների վերացման ուղիների, եղանակների և ժամկետների մասին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու միջոցով:

Տնտեսության բնագավառում իրագործվող ֆինանսական վերահսկողությամբ ստուգման է ենթարկվում նաև խնայողության ռեժիմի պահպանու-

մը: Բացահայտվում են բյուջետային և սեփական շրջանառու միջոցների օգտագործման նպատակայնությունը, նյութական արժեքների պահպանման վիճակը: Ֆինանսական վերահսկողության մեջ են մտնում նաև տարբեր ֆոնդերի, ինչպես նաև փոխառած միջոցների օգտագործման ստուգումը, տնտեսության ներքին ռեզերվների բացահայտումը, նրանց օգտագործումը՝ արտադրության աճի և կուտակումների մեծացման համար: Ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումներ, այլև կանխվում են այդ խախտումները, նախատեսվում տնտեսության կատարելագործման ուղիներ:

Լինելով սոցիալական վերահսկողության հատուկ ձև՝ ֆինանսական վերահսկողությամբ ստուգման է ենթարկվում գործադիր և կարգադրիչ մարմինների կողմից ընդունված ֆինանսական ակտերի կատարումը:

Ֆինանսական վերահսկողության գործառնությունների իրականացման չափազանց լայն ոլորտը թույլ է տալիս նշանակալիորեն ազդել ընդլայնված վերարտադրողական հարաբերությունների ամբողջության վրա:

- ¹ Финансы денежное обращение, кредит. Под ред. Л.А. Дробозиной, М., 2011, С. 89.
² Финансы Под ред. В.В. Ковалева, М., 2012, С. 23.
³ Տե՛ս, Социалистическая законность и способы ее обеспечения, под ред. члена-корреспондента АН СССР, В.М. Чиквадзе, изд-во “Наука”, 1968, С. 15.
⁴ Տե՛ս, А. Лунев, Обеспечение законности в советском государственном управлении, М., 1963, С. 4.
⁵ Տե՛ս, Советское административное право, под ред. Профессора, доктора юрид. наук. Ю.М. Козлова, изд-во “Юридическая литература”, М., 1973, С. 254.

Найри Саргсян
 Председатель ОО “Палата Аудиторов”

РЕЗЮМЕ

Финансовый контроль как правовое средство управления экономикой и противодействия коррупции

В статье предпринята попытка выделить составляющие финансового контроля и контроля, составляющие содержание фискальной политики, такие как законность, финансовая дисциплина, денежно-кредитный контроль, которые по своей природе представляют собой комплекс антикоррупционных мероприятий, направленных на искоренение коррупции в экономике.

Ключевые слова: финансовая политика, метод управления, контроль денег, финансовая дисциплина, финансовая законность, коррупция, финансовые нарушения, финансовый надзор.

Nairi Sargsyan
 President of the “Chamber of Auditors” PO

SUMMARY

Financial control as a legal way of economic management and anti-corruption

This article attempts to identify financial control and regulation components of financial policy, such as legality, financial discipline, monetary control, which by their nature are complex anti-corruption actions aimed at eliminating corruption in the economy.

Key words: financial policy, management method, money control, financial discipline, financial legitimacy, corruption, financial irregularities, financial control.

Բնագիրը ներկայացվել է 27.10.2021թ.

Ընդունվել է տպագրության 18.11.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. Սուքիասյանը

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
հայցորդ

ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎՐԱ

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում իրականացված դատական և իրավական բարեփոխումների ծրագրերին և դատական անկախության վրա վերջիններիս ազդեցության ուսումնասիրությանը: Ուսումնասիրությունը կատարվել է՝ հիմք ընդունվելով 1995 թվականի Սահմանադրությունից հետո իրականացված առաջին և դրան հաջորդած ռազմավարական ծրագրերն ու դրանցում նախատեսված գործողությունները: Հոդվածում առանձնակի շեշտադրվում են իրականացված ծրագրերով դատարանների անկախության ապահովմանն ուղղված միջոցառումներն ու դատական իշխանության ինքնակառավարման մարմինները: Ուսումնասիրության առարկա հանդիսացող խնդիրը դիտարկվում է ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում: Որպես արդյունք՝ հոդվածը երևան է հանում հարցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում իրականացված միջոցառումների արդյունավետությունը, բացերն ու դեռևս առկա մարտահրավերները:

Հիմնաբառեր՝ դատական իշխանություն, դատական և իրավական բարեփոխումներ, ռազմավարական ծրագիր, ներպետական օրենսդրություն, իրականացված միջոցառումներ, անկախության ապահովման ինքնակառավարման մարմիններ:

Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի բարեփոխմանն ուղղված քայլերը նախաձեռնվեցին անկախացումից անմիջապես հետո, ինչն ընդգրկվեց երեք հիմնական փուլերով իրականացված դատական և իրավական բարեփոխումների ծրագրերում: Մասնավորապես՝

1. Բարեփոխումների առաջին փուլ, որը սկսվեց 1995թ.-ի Սահմանադրության ընդունմամբ,
2. երկրորդ փուլ, որի սկզբնավորումը պայմանավորվեց 2005թ. Սահմանադրական փոփոխություններով, ինչը ընդգրկեց երկու ծրագրեր՝ 2009-2011թթ. և 2012-2016թթ. դատական և իրավական բարեփոխումների ծրագրերը,
3. և երրորդ փուլը, որն էլ իր հերթին պայմանավորվեց 2015թ.-ի Սահմանադրական փոփոխություններով:

Այսպես, 1996 թվականին ՀՀ-ում մեկնարկեց դատական և իրավական բարեփոխումների առաջին փուլը, որի հիմնական նպատակներից մեկն էր՝ վերացնել խորհրդային դատական համակարգը և ստեղծել նորը, ինչի առանցքում դրվեց համակարգի անկախության հարցը:

Ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխման հիմքն այս շրջանում հանդիսացավ Արդարադատության խորհրդի ձևավորումը: Վերջինս դատական իշխանության ինքնակառավարման մարմին էր, որը պատասխանատու էր՝ դատավորների նշա-

նակման, առաջխաղացման, պաշտոնից ազատման, դատական իշխանության ներքին այլ հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու համար¹:

2006-2009թթ.-ի դատական և իրավական բարեփոխումների երկրորդ փուլի ծրագիրն աչքի ընկավ դատարանների գործունեությանն առնչվող օրենսդրական փոփոխություններով: Հատկանշական է, սակայն այն, որ այս փուլում իրականացված գործողությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, արդյունքների գնահատման զեկույցներ հասանելի չեն:

Զննարկվող թեմայի վերաբերյալ հաջորդ ծրագրերն իրականացվել են համապատասխանաբար 2009-2011 և 2012-2016թթ.-ին: Պետք է նշել, որ երկու դեպքում էլ անկախ ու հաշվետու դատական համակարգ ձևավորելը ինչպես նախկինում, այս ծրագրերում մույնպես առաջնային տեղ է զբաղեցրել, ինչը առավել կոնկրետ ընդգրկում էր դատավորների նշանակման ընթացակարգերի, դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության ու կարգապահական վարույթների բարելավմանն ուղղված միջոցառումներ:

2019 թվականից մինչ օրս ՀՀ-ում ընթանում է դատական և իրավական բարեփոխումների երրորդ փուլի հերթական ծրագիրը², որը բխում է 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների

հայեցակարգից և 2018 թվականի քաղաքական փոփոխությունները՝ կրկին կենտրոնական նպատակ դիտարկելով իրավունքի գերակայության և դատական իշխանության անկախության անհրաժեշտությունը:

Ակնհայտ է, որ վերոնշյալ ժամանակահատվածում իրականացված դատական և իրավական բարեփոխումների ծրագրերով կյանքի են կոչվել մի շարք միջոցառումներ ու գործողություններ, այնուհանդերձ, թե՛ տեղական, թե՛ միջազգային կազմակերպությունների ամփոփմամբ և գնահատմամբ դրանք համակարգային փոփոխությունների չեն բերել և դատական իշխանության ու դատավորների անհատական անկախության հարցը շարունակում է մնալ արդիական:

Դատական իշխանության անկախության բացակայությունն է, որ հիմք է հանդիսանում նաև ՀՀ-ում երկար տարիներ շարունակ մարդու իրավունքների հիմնախնդիրների ոչ բավարար լուծմանը, քանի որ, ինչպես հայտնի է, անկախ դատարանների բացակայությունն ու դատական իշխանության ոչ արդյունավետ մատուցումն ուղղակիորեն կապված են տվյալ երկրում իրավունքների պաշտպանության հետ:

Դատական իշխանության անկախությունը յուրաքանչյուր իրավական պետության հիմնաքարերից և ժողովրդավարական հասարակություն հաստատելու կարևոր նախապայմաններից է, ինչով պայմանավորված՝ դատարանների անկախության հարցի ուսումնասիրությունը գրավում է ոլորտի մասնագետների և արդարադատության հետ առնչվող յուրաքանչյուր անձի հետաքրքրությունը:

Ժամանակակից սահմանադրական համակարգերում դատական իշխանության անկախության սկզբունքը հենվում է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա: Այս սկզբունքի համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կազմում են կառավարման համակարգի երեք առանձին ճյուղերը, որոնք ձևավորում են փոխադարձ զսպիչների և հակակշիռների համակարգ:

Որպես արդյունք՝ օրենսդիր և գործադիր իշխանություններից դատական իշխանության անկախությունը երաշխավորում է տվյալ միջավայրում իրավունքի գերակայության հիմնադրումն ու ամրապնդումը, ինչպես նաև անհատի և նրա իրավունքների պաշտպանությունը:

Որպես ռազմավարական ծրագրերի շրջանակում ուսումնասիրություն, հողվածի շրջանակներում խնդիր առանձնացվել են հատկապես դատական իշխանության ինքնակառավարման մարմին-

ների գործունեությանն ուղղված գործողությունները՝ որպես դատական իշխանության անկախության ապահովման կարևորագույն գործոն:

Ինքնակառավարման մարմինների գործունեության երաշխիքներն ու կարգավիճակն ըստ ՀՀ-ում իրականացված դատաիրավական ոլորտի բարեփոխումների

1995 թվականին, երբ ընդունվեց ՀՀ առաջին Սահմանադրությունը, անհրաժեշտություն առաջացավ նաև ձևավորել անցումային շրջանի տրամաբանությունից բխող ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքեր:

Այստեղ պետք է նշել, որ առաջին Սահմանադրությամբ դատական իշխանության անկախության երաշխավորման ինքնակառավարման մարմիններ նախատեսված չէին:

Ըստ Սահմանադրության՝ դատարանների անկախության երաշխավորը դիտարկվում էր հանրապետության նախագահը⁴:

Սահմանադրությունը նախատեսում էր Արդարադատության խորհրդի գործունեությունը, սակայն, դատական իշխանության անկախության երաշխավոր, ըստ էության, այն չէր հանդիսանում:

Արդարադատության Խորհուրդը, համաձայն կարգավորումների, ղեկավարվում էր հանրապետության նախագահի կողմից: Վերջինիս փոխնախագահներն էին արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը: Խորհրդի կազմի մեջ մտնում էին նաև ՀՀ նախագահի կողմից 5 տարի ժամկետով նշանակված 14 անդամ՝ 2 իրավաբան-գիտնական, 9 դատավոր, 3 դատախազ⁵:

Արդարադատության խորհրդի կազմի և գործունեության հարցերը կարգավորվում էին «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքով⁶:

Ինչպես արդեն նշվեց վերևում՝ բարեփոխումների ծրագրերի առաջին փուլի ռազմավարական նպատակը երկրում անկախ, արդյունավետ ու վստահություն ներշնչող դատական իշխանության ստեղծումն էր, ինչից բխում էին վեց առավել ոլորտային նպատակներ: Վերջիններիս մեջ առաջնային տեղ էր զբաղեցնում դատական իշխանության ինքնակառավարման ուժեղացումը՝ դատարանների նախագահների խորհրդին աջակցելու միջոցով:

Այս նպատակի իրագործման ինդիկատոր սահմանվել էր դատարանների նախագահների խորհրդի կարողությունների ուժեղացումն ու վերջինիս կողմից դատական իշխանության արդյունավետ կառավարումը:

Զմնարկվող շրջանի գործողությունների ու միջոցառումների ուսումնասիրությունը ցույց է տալիս,

որ ՀՀ-ում անկախացումից հետո չի եղել դատական իշխանության անկախության մշակույթ: Սա կարելի է բացատրել մի կողմից դեռևս տիրող սովետական մտածելակերպով, մյուս կողմից՝ դրան բնորոշ իշխանությունների տարանջատման սկզբունքի, առավել ևս դատական իշխանության անկախության բացով: Նմանատիպ իշխանությունների բաժանման սկզբունքը Հայաստանի Հանրապետությունում չէր ընկալվում որպես իշխանությունների հավասար բաժանում, քանի որ բավականին երկար ժամանակ իշխանության բոլոր թևերը վերահսկվել են հանրապետության նախագահի կողմից:

Ստեղծված պայմաններում ոչ միայն դատական համակարգը, այլ նաև իշխանության մնացած թևերը եղել են խոցելի, սակայն դատական իշխանության հարցը եղել է առավել խնդրահարույց: Վերջինս, չունենալով ներքին և արտաքին պաշտպանություն, եղել է գործադիր իշխանության հսկողության ներքո՝ ի դեմս հանրապետության նախագահի:

Դատական և իրավական բարեփոխումների երկրորդ փուլը սկիզբ առավ 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններով և ընդգրկեց 2006-2009 թվականները: Այս փուլին առավելապես բնորոշ են եղել օրենսդրական նախաձեռնություններն ու օրենսդրական փաթեթների ընդունմանն ուղղված գործողությունները: Որոնց մեջ կենտրոնական դեր ունեցավ 2007 թվականին ընդունված ՀՀ Դատական օրենսգիրքը: Վերջինս պետք է արտացոլեր ոլորտին վերաբերող բազմաթիվ միջազգային համաձայնագրերի պահանջները, սահմաներ դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, Արդարադատության խորհրդի լիազորությունները: Զննարկվող փուլի վերաբերյալ հաշվետվություններ կամ ամփոփող շատ տվյալներ հասանելի չեն: Որպես տեղեկատվության աղբյուր դիտարկվել է 2009-2011 թվականների դատական և իրավական բարեփոխումների ծրագիրը՝ նախորդ ծրագրին կատարած հղումների հաշվին: Առավել մանրամասն տեղեկություն ստանալու ջանքերը եղել են անօգուտ, քանի որ պարզվել է, որ այդ ժամանակաշրջանում տվյալների հավաքագրում չի իրականացվել, իսկ եղած տեղեկությունը չի պահպանվել⁷ Արդարադատության նախարարության շենքում տեղի ունեցած հրդեհի պատճառով:

Ինչպես դատական և իրավական բարեփոխումների առաջին, այնպես էլ երկրորդ փուլում խնդրահարույց է եղել մասնավորապես դատական իշխանության ինքնակառավարման մարմինների՝ Արդարադատության խորհրդի կազմն ու ձևավորումը:

Այս խնդրին անդրադարձել են նաև միջազգային կառույցները՝ ՀՀ-ին ուղղված զեկույցներով ու հանձնարարականներով:

Արդարադատության խորհրդին առնչվող հիմնական մտահոգությունն այն է եղել, որ այն ամբողջությամբ չի համապատասխանել դատական իշխանության անկախության ապահովման համար անհրաժեշտ գործառնության լիազորություններով մարմին: Ո՛չ այդ ժամանակ գործող Սահմանադրությունը, ո՛չ էլ Դատական օրենսգիրքը Արդարադատության խորհուրդը չի դիտարկել որպես դատական իշխանության ինքնակառավարման մարմին⁸:

2005 թվականի Սահմանադրական փոփոխությունները այս խնդրին որոշակի լուծում են բերել: Մասնավորապես, փոփոխության են ենթարկվել Արդարադատության խորհրդի կազմն ու ձևավորման կարգը:

Սահմանադրության կարգավորումների համաձայն՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին՝ ՀՀ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուսական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի⁹:

Այստեղ հիշատակման է արժանի նաև 2007 թվականին ընդունված Դատական օրենսգիրքը և Արդարադատության խորհրդի վերաբերյալ վերջինիս կարգավորումները: Դատական օրենսգիրքը միավորեց դատական իշխանության ոլորտի օրենսդրական բոլոր կարգավորումները և փոխարինեց Արդարադատության խորհրդի մասին, Դատարանակազմության և Դատավորի կարգավիճակի մասին ՀՀ օրենքներին՝ առավել մանրամասն կարգավորում տալով Խորհրդի կազմին, կազմավորմանն ու գործառնություններին:

Համաձայն Դատական օրենսգրքի Արդարադատության խորհուրդը համարվում է անկախ մարմին, սակայն ուղղակիորեն չէր նշվում, որ ԱԽ-ն դատական իշխանության ինքնակառավարման մարմին է:

Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ԱԽ տրված լիազորությունները կենտրոնացնում էին հիմնականում 2 կարևոր գործառնության շուրջ՝ դատավորների նշանակում, առաջադաշնում, դատավորներին պաշտոնից ազատում և դատավորների կարգապահական պատասխանատվությունը:

վություն:

Ինչ վերաբերում է Խորհրդի ադմինիստրատիվ ու աշխատակազմի գործառնություններին, ապա այն իրականացվում էր Դատական դեպարտամենտի կողմից: Վերջինս պատասխանատու էր նաև դատական ծառայության, օրենքով դատարաններին, ինչպես նաև դատական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների ու գործառնությունների իրականացման համար¹⁰:

Անդրադառնալով այս փոփոխությունների վերաբերյալ միջազգային կառույցների արձագանքներին, պետք է նշել, որ, օրինակ, Համաշխարհային Բանկի ֆինանսական աջակցությամբ իրականացված ծրագրային հաշվետվության մեջ Համաշխարհային Բանկը 2000 թվականի համեմատությամբ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները դրական է գնահատել: Մասնավորապես, Արդարադատության խորհրդի կազմում գործադիր իշխանության ներգրավվածության նվազումը, ինչպես նաև Դատավորների ընդհանուր ժողովի ստեղծումը, Դատարանների նախագահների խորհրդի գործառնությունների վերանայումը¹¹ համարվել են դրական փոփոխություններ:

2009-2011թթ-ին իրականացված Դատական և իրավական բարեփոխումների երրորդ ծրագրի համար ընտրված էր 5 թիրախային ոլորտ, որտեղ կրկին կենտրոնական դեր ուներ անկախ և հաշվետու արդարադատության ապահովումը¹²:

Ծրագիրը և դրա շրջանակներում իրականացված միջոցառումները՝ որդեգրած նպատակների առնչությամբ մեծ ձեռքբերումներ չեն ապահովել: Ավելին, ծրագրի գործողությունների կատարման վերաբերյալ միջանկյալ և վերջնական հաշվետվություն չի ներկայացվել: Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմիններից Արդարադատության նախարարության պաշտոնական կայք էջում հասանելի է այս փուլի վերաբերյալ մեկ հետազոտություն «Դատաիրավական բարեփոխումների 2-րդ ծրագրի վերաբերյալ Հանրային կարծիքի Մոնիթորինգ և հարցումներ» վերտառությամբ: Վերջինս, սակայն, ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրում¹³:

Այս փուլի ծրագրով նախատեսված նպատակները և հատկապես դատարանների անկախության խնդիրը շարունակել է արդիական մնալ նաև միջազգային կառույցների գնահատմամբ, մասնավորապես՝ իշխանությունների բաժանման համատեքստում¹⁴:

2012-2016թթ. դատաիրավական բարեփոխումների ծրագրով ևս՝ կենտրոնական նպատակ

էր դիտարկվում արդար և արդյունավետ դատական իշխանություն ձևավորելը: Ծրագրի հայեցակարգային հիմնավորումներում նշվել է, որ դեռևս արդիական է շարունակում մնալ դատական իշխանության անկախության խնդիրը թե՛ ներքին, թե՛ արտաքին մակարդակում՝ պայմանավորված ինչպես գործառնության, այնպես էլ կառուցակարգային գործոններով¹⁵: Նշված նպատակի իրագործման համար որպես միջոց է դիտարկվել նաև դատավորների ինքնակառավարման առավել արդյունավետ մոդելի ներդրումը:

Զննարկվող շրջանում իրականացված ծրագրի միջոցառումների կատարման վերաբերյալ Արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է հաշվետվություն: Վերջինս, սակայն, ներկայացրել է որպես մինչև 2016 թվականի նոյեմբերի 30-ը կատարված աշխատանքների վերաբերյալ արդյունքներ¹⁶: Ըստ այդմ, միջոցառումների կատարումը Նախարարությունը գնահատել է որպես ամբողջությամբ կատարված, մասնակի կատարված և չկատարված:

Այդ չափանիշով գնահատման արդյունքում հաշվետվության մեջ ներկայացվել է թվով ընդհանուր 67 միջոցառման կատարողականի վերաբերյալ տեղեկություն: Այդ 67 միջոցառումներից՝

- 7-ը՝ չկատարված,
- 29-ը՝ ամբողջությամբ կատարված,
- 31-ը՝ մասնակի կատարված:

Չկատարված միջոցառումների համար որպես հիմնավորում նշվել է ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, սակայն հաշվետվության մեջ որևէ տվյալ չկա բյուջեով նախատեսված ընդհանուր ֆինանսական հատկացումների ու ծախսերի մասին և թե հավելյալ ինչքան ֆինանսական միջոցների անհրաժեշտություն է եղել: Ինչ վերաբերում է մասնակի կատարված միջոցառումներին, ապա դրանք հետաձգվել են մինչև 2017 թվականը: Հետաձգումը ընդունվել է՝ հաշվի առնելով 2012-2016 թթ. ծրագրի թերացումներն ու միջոցառումների իրագործման բացթողումները: Ըստ այդմ, 2016թ. նոյեմբերի 30-ի ՀՀ նախագահի հրամանագրով ծրագրի իրագործման վերջնաժամկետը հետաձգվել է մինչև 2017 թվականը¹⁷:

Միջոցառումների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ նախատեսված շուրջ 130 միջոցառումներից 49-ը տեղափոխվել է կատարման 2017 թվական, ինչը կազմում է գործողությունների շուրջ 38%-ը: Հետաձգված ծրագրի շրջանակներում միջոցառումների կատարողականը, ըստ ԱՆ հաշվետվության, ունի հետևյալ պատկերը՝

- 11 գործողություն՝ չկատարված,
- 21 գործողություն՝ ամբողջությամբ կատարված,
- 14 գործողություն՝ մասնակի կատարված¹⁸ :

Ինքնակառավարման մոդելի ուժեղացմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների առնչությամբ կարող ենք նշել, որ պրակտիկայում այդ շրջանի համար փոփոխություններ չեն արձանագրվել: Ծրագրի կատարման համար պատասխանատու պետական մարմինների կողմից այս նպատակի ներքո նույնպես՝ միջոցառումների կատարման հաշվետվություն չի ներկայացվել:

Քննարկվող ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնվեցին հերթական Սահմանադրական բարեփոխումները: Մասնավորապես, 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ի թիվս այլ փոփոխությունների, օրենքով փոխվեց դատավորի կարգավիճակը, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, դատավորների ընտրության և նշանակման կարգը, ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակը: Ավելին, դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու նպատակով, սահմանադրական մակարդակով ամրագրվել են Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի կազմը և Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը, վերջինիս լիազորությունները: Հստակ ամրագրում են ստացել դատավորի կարգավիճակի օրենսդրական երաշխիքները, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրության և նշանակման կարգը:

Հարկ է նշել, որ ԲԴԽ-ի ձևավորումը՝ որպես ինքնուրույն սահմանադրական մարմնի բավականին դրական է գնահատվում, սակայն պրակտիկայում արդեն իսկ և այսօր էլ ներկայացվում են մտահոգություններ ինչպես դրա կազմի, այնպես էլ ձևավորման ու գործառնությունների՝ մասնավորապես իրականացրած գործունեության կապակցությամբ¹⁹ :

Վերոնշյալ բարեփոխումների բոլոր ծրագրերի ու միջոցառումների ուսումնասիրությունը փաստում է, որ ռազմավարական ծրագրերով արձանագրված խնդիրները ամբողջական լուծում չեն ստացել և կրկին հայտնվել են միջազգային կառույցների հանձնարարականներում²⁰⁻²³ :

Ի մի բերելով հոդվածում ներկայացված տեղեկություններն ու իրականացված ուսումնասիրությունը՝ պետք է նշել, որ Հայաստանում դատական և իրավական բարեփոխումների շարունակական ծրագրերի իրականացումը հասցեագրել է մեկ հիմնական խնդիր՝ մեծացնել դատական իշխանության անկախությունը, ինչը, սակայն, մինչ օրս հանդիսանում է չլուծված և օրակարգային հարց: Չնայած շուրջ 25 տարիների ընթացքում 3 փուլով իրականացրած 4 (5-րդը՝ դեռևս ընթացքի մեջ) երկարաժամկետ ծրագրերի գործողություններին՝ դատական իշխանության անկախության խնդիրը շարունակում է հանդիսանալ Հայաստանում արդարադատության իրացման առանցքային խոչընդոտ:

¹ Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն, հոդված 94-95-րդ, 1995 թվական

² Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

³ Տե՛ս, ՀՀ Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգ: Գլուխ 2, 2015թ.:

⁴ Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն, հոդված 94-րդ, 1995թ.:

⁵ Տե՛ս, նույն տեղում

⁶ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության օրենքը Արդարադատության խորհրդի մասին

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1752&lang=arm&enc=utf8>

⁷ Տե՛ս, Հասմիկ Հարությունյան, Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը ՀՀ-ում դատական իշխանության անկախության հաստատման վրա, Բաց հասարակություն հիմնադրամներ Հայաստանի, Երևան 2018 <http://www.osf.am/wp-content/uploads/2019/01/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%>

D5%B6%D5%A8-%D5%80%D5%80-%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A4% D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AB%D5%B7%D5%AD%D5%A1%D5%B6%D5%B8% D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%AD%D5%B8%D6%82% D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BE%D6%80%D5%A1.pdf

⁸ Տե՛ս, Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on Independent Judicial Systems PROJECT REPORT Judicial self-governing bodies Judges' Career, Strasbourg September of 2011, էջ 112:

⁹ Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն, հոդված 94.1-րդ, 2005 թվական:

¹⁰ Տե՛ս, ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 194-րդ, 2007 թվական:

¹¹ Տե՛ս, World Bank, Implementation Completion and Results Report for a Judicial Reform Project in Armenia, June 28, 2007:

¹² Տե՛ս, ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարական գործողությունների ծրագիր և ծրագրից բխող միջոցառումներ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926>:

¹³ Տե՛ս, http://www.moj.am/storage/uploads/JRP2_Monitoring_Report_Phase_2_arm.pdf

¹⁴ Տե՛ս, Human Rights Council Fifteenth session Agenda item 6 Universal Periodic Review Report of the Working Group on the Universal Periodic Review, Armenia, 2010:

¹⁵ Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76932>

¹⁶ Տե՛ս, ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների 2016 թվականին կատարման վիճակի վերաբերյալ հաշվետվություն:

¹⁷ Տե՛ս, http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8318762527991_002_2016-tarekanpdf.pdf

¹⁸ Տե՛ս, ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի տարեկան հաշվետվություն «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ծրագրից բխող 2017 թվականի համար նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_145550184671_tarekan-hashvetvutyun-2017-datairavakan.pdf

¹⁹ Տե՛ս, Տեղեկանք ,Բարձրագույն դատական խորհրդի գործունեության վերաբերյալ <http://prwb.am/new/hy/2018/10/26/%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%A2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80-2/>

²⁰ Տե՛ս, Organisation For Economic Co-Operation And Development Anti-Corruption Network For Eastern Europe And Central Asia Anti-Corruption Reforms In Armenia Round 3 Monitoring Of The Istanbul Anti-Corruption Action Plan, 2014.

²¹ Տե՛ս, Human Rights Council Working Group on the Universal Periodic Review Twenty-first session , 19–30 January 2015 Compilation prepared by the Office of the United Nations High Commissioner for Human Rights in accordance with paragraph 15 (b) of the annex to Human Rights Council resolution 5/1 and paragraph 5 of the annex to Council resolution 16/21, Armenia.

²² Տե՛ս, European Commission For Democracy Through Law (Venice Commission) Opinion On The Draft Concept Paper On The Constitutional Reforms Of The Republic Of Armenia Adopted By The Venice Commission At Its 100th Plenary Session (Rome, 10-11 October 2014).

²³ Տե՛ս, Human Rights Council Twenty-ninth session Agenda item 6 Universal Periodic Review Report of the Working Group on the Universal Periodic Review, Armenia, 2015.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թվական
2. ՀՀ Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգ: Գլուխ 2, 2015թ.:
3. Eastern Partnership Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Working Group on Independent Judicial Systems PROJECT REPORT Judicial self-governing bodies Judges' Career, Strasbourg September of 2011, էջ 112
4. ՀՀ Սահմանադրություն, հոդված 94.1-րդ, 2005 թվական:
5. Հոդված 194-րդ, ՀՀ Դատական օրենսգիրք, 2007 թվական:
6. World Bank, Implementation Completion and Results Report for a Judicial Reform Project in Armenia, June 28, 2007
7. ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարական գործողությունների ծրագիր և ծրագրից բխող միջոցառումներ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=50926>
8. «ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ, ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2 ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ, ՓՈՒԼ 2, Ապրիլ 2013, http://www.moj.am/storage/uploads/JRP2_Monitoring_Report_Phase_2_arm.pdf
9. Human Rights Council Fifteenth session Agenda item 6 Universal Periodic Review Report of the Working Group on the Universal Periodic Review, Armenia, 2010.

10. ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների 2016 թվականին կատարման վիճակի վերաբերյալ հաշվետվություն:
11. Տարեկան հաշվետվություն ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ծրագրից բխող 2017 թվականի համար նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ
http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_145550184671_tarekan-hashvetvutyun-2017-datairavakan.pdf

Асмик Арутюнян
Соискатель Академии государственного
управления Республики Армения

РЕЗЮМЕ
*Влияние программ судебной и правовой реформы на установление
судебной независимости в Республике Армения*

Данная статья посвящена изучению программ судебной реформы и их влияние на независимость судебной системы в Республике Армения. Исследование проводилось на основе первых стратегических планов, реализованных после принятия Конституции 1995 года, и действий, предусмотренных в них. В статье особое внимание уделяется мерам, принимаемым для обеспечения независимости судов и органов самоуправления судебной власти посредством реализуемых программ. Исследуемая проблема рассматривается как теоретически, так и практически. В результате в статье подчеркивается эффективность мер, принятых в РА по данному вопросу, а также пробел, которые все еще существуют.

Ключевые слова: судебная система, судебно-правовые реформы, стратегический план, внутреннее законодательство, реализованные меры, органы самоуправления по обеспечению независимости.

Hasmik Harutyunyan
Applicant of the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY
*The impact of judicial and legal reform programs on the establishment
of judicial independence in the Republic of Armenia*

This article is dedicated to the study of implemented judicial reform programs and their impact of the latter on judicial independence in the Republic of Armenia. The study was based on the first strategic plans implemented after the 1995 Constitution and the actions envisaged in them. The article places special emphasis on the measures taken to ensure the independence of the courts and the self-governing bodies of the judiciary through the implemented programs. The problem under study is considered both theoretically and practically. As a result, the article highlights the effectiveness of the measures taken in the Republic of Armenia on the issue, the gaps and the challenges that still exist.

Key words: Judiciary, judicial-legal reforms, strategic plan, domestic legislation, measures taken, self-governing bodies to ensure independence.

Բնագիրը ներկայացվել է 16.11.2021թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հարությունյանը

ՈՌԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
կրթության կառավարման և պլանավորման
ամբիոնի վարիչ, դոցենտ, բանասիրական
գիտությունների թեկնածու

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ ԳԻՏԵԼԻԲԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունն ու շարունակականությունն ապահովելու պարտադիր գործընթացներից է գիտական արդյունքների պարբերական գնահատումը և չափելի ցուցանիշների կիրառումը: Այս տեսանկյունից կարևոր է, որ հետազոտական համալսարանները մշակեն և սահմանեն գործունեության առանցքային ցուցանիշներ (ԳԱՅ-եր)՝ գիտահետազոտական աշխատանքների կատարման տարբեր փուլերում իրականացրած աշխատանքների վերջնարդյունքները չափելու և գնահատելու նպատակով: ԳԱՅ-երի մշակումն ու գործառնումը ցանկացած կազմակերպության ռազմավարական կառավարման գործընթացի բաղկացուցիչներից է, որոնց միջոցով համալսարանների կոլեգիալ մարմինները, ղեկավար կազմը, ռազմավարություն ու քաղաքականություն մշակողները և կառավարման գործընթացների իրականացման այլ պատասխանատուները կարողանում են չափել ու գնահատել թիրախային ոլորտներում (հետազոտական համալսարանների դեպքում՝ մասնավորապես գիտական հետազոտության) արձանագրած հաջողություններն ու արդյունքները: Հաշվի առնելով նշվածը՝ սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և առաջարկել հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետության ցուցանիշները գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում:

Հիմնաբառեր- հետազոտական համալսարաններ, գիտահետազոտական գործունեություն, գործունեության արդյունավետության ցուցանիշներ, կատարողականի գնահատում:

Հետազոտական համալսարանները ԳԱՅ-երի կիրառմամբ կարողանում են գնահատել և չափելի դարձնել իրենց գիտահետազոտական գործունեության արդյունքները, արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: ԳԱՅ-երը փոփոխականներ են, որոնք չափում են տվյալ ոլորտի գործունեության արդյունավետությունը կամ արտադրողականությունը: ԳԱՅ-երի միջոցով կարելի է գնահատել, օրինակ, թե գիտահետազոտական կամ այլ տիպի համալսարանի առանցքային ոլորտների պատասխանատուները որքանով են կարողացել տվյալ ժամանակահատվածում ապահովել սահմանված վերջնարդյունքները, որքանով է նրանց գործունեությունը համապատասխանել համալսարանի ռազմավարական առաջնահերթություններին, նպատակներին ու խնդիրներին, կազմակերպական մշակույթին և համատեքստին, ինչպիսի կարողություններ են նրանք զարգացրել այդ ժամանակահատվածում, անձնական և մասնագիտական ինչպիսի որակներ ու վարք են դրսևորել աշխատանքային գործունեության ընթացքում և այնպիսի այլ ցուցանիշներ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցություն ունենալ համալսարանի գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման վրա: ԳԱՅ-երը կատարողականի գնահատման չափումներ են, որոնց արդյունքների հիման վրա համալսարանի

ղեկավար կազմը կարող է վերանայել աշխատակիցների գնահատման և պարգևատրման համակարգերը: Հետազոտական համալսարանների ընդհանուր կատարողականի, ներառյալ գիտահետազոտական ոլորտի արդյունավետ չափումն ու գնահատումը ենթադրում են նաև, որ այդ գործընթացների իրականացման պատասխանատուները ԳԱՅ-երը դիտարկում են որպես իրենց շահակիցներին հաշվետվողականության մեխանիզմ, որը հետագայում ուղեցույց և հիմք է հանդիսանում որոշումների կայացման համար:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների համաձայն՝ համընդհանուր կիրառություն ունեցող ԳԱՅ-երը նմանատիպ այլ ցուցանիշների հետ համադրական վերլուծության են ենթարկվում: ԳԱՅ-երի ամբողջական պատկերն ունենալու, և ազգային մակարդակում ստույգ տեղեկություն ու տվյալներ ստանալու նպատակով, ցանկալի է, որ հետազոտական համալսարանների հետազոտողների շրջանում իրականացվեն հարցումներ, որոնց արդյունքների ուսումնասիրությունը և վերլուծությունը պետք է իրականացվեն գիտական հետազոտության ոլորտում մեծ փորձ ունեցող համապատասխան փորձագետների կողմից:

Հետազոտական համալսարանները մեծ ուշադրություն են դարձնում գիտական անձնա-

կազմի կատարողականի արդյունավետության չափմանը, գնահատմանը և բարձրացմանը՝ նրանց գործունեության որակական և քանակական ցուցանիշներին: Վերջիններս չափվում և գնահատվում են գիտական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքներով, որոնք կարող են մեծապես ազդել գիտելիքահենք հասարակության զարգացման վրա և էական նշանակություն ունենալ սոցիալ-տնտեսական ու տեխնոլոգիական մարտահրավերների հաղթահարման գործընթացներում:

ՀՀ-ում պետական և ինստիտուցիոնալ մակարդակներում գիտահետազոտական ոլորտում սահմանված ԳԱՅ-երի վերլուծության արդյունքները լիարժեքորեն չեն կապվում պետական առաջնահերթությունների հետ: Ավելին, այդ ԳԱՅ-երի վերաբերյալ հանրային քննարկումները խիստ սահմանափակ են, և հաշվետվողականության ապահովման տեսանկյունից գիտական ու ակադեմիական հանրության ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում իրականացված գիտական հետազոտության, արդյունքների, այդ ոլորտի զարգացման շարժընթացի ու միտումների մասին մեծ մասամբ լիարժեք տեղեկություն չունի: Չարգացած երկրներում հետազոտական խոշոր կազմակերպություններն իրենց գիտահետազոտական գործունեությունը չափելու և գնահատելու նպատակով՝ կիրառում են մի շարք այնպիսի ԳԱՅ-եր, ինչպիսիք են՝ հրատարակված աշխատանքների, պատենտների և դրանց արված հղումների թիվը: Այդպիսի երկրներում ԳԱՅ-երը սահմանվում են տարբեր նպատակների, օրինակ՝ ազգային մակարդակում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես մոտեցումների առաջարկման համար: Սա ենթադրում է, որ ԳԱՅ-երը սահմանելիս՝ կազմակերպությունները հաշվի են առնում ինստիտուցիոնալ և պետական (ազգային) առաջնահերթությունները՝ դրանց հիման վրա որոշելով, թե ԳԱՅ-երը որ նպատակների իրականացումը պետք է չափեն:

Չարգացող երկրներում հետազոտողները հիմնականում կենտրոնացնում են ոչ այնքան տվյալ երկրի կարիքների բավարարման, որքան գիտահետազոտական հրատարակված աշխատանքներ ունենալու խնդրի վրա³: Չարգացող մի շարք երկրներում գիտահետազոտական ոլորտը ֆինանսավորող գործակալությունները կենտրոնացնում են, օրինակ, սոցիալական բարեկեցության մակարդակի բարձրացման, ազգային մրցակցային դաշտի ամրապնդման և սոցիալ-տնտեսական այլ առանցքային խնդիրների լուծման վրա⁴:

Մի շարք հետազոտողներ բավարար ներուժ կամ հնարավորություն չունեն իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակելու այնպիսի ամսագրերում, որտեղ հրատարակվող գիտահետազոտական աշխատանքներ

րի ազդեցությունը գնահատվում է միջազգային վիճակագրական ինստիտուտի (International Statistical Institute) կողմից: Որոշ հետազոտողների կարծիքով՝ ֆինանսավորող գործակալությունները չեն սահմանում այնպիսի քաղաքականություններ ու գործընթացներ, որոնցով կարելի է գնահատել հետազոտության ազդեցությունը, փոխարենը՝ նախընտրում են գիտական հետազոտության ոլորտի ԳԱՅ-երը չափել գիտաժողովների նյութերի և ամսագրերում տպագրված գիտահետազոտական աշխատանքների, հետազոտական նախատիպերի (prototypes) և առևտրայնացված արտադրանքների միջոցով՝ երկրորդական նշանակություն տալով հետազոտության շնորհիվ պետությանը տրված օգուտների չափմանը կամ գնահատմանը: Հատկանշական է նաև՝ գիտական հանրություն ընդունված է այն համընդհանուր կարծիքը, ըստ որի՝ գիտահետազոտական ոլորտում, այդ թվում՝ հետազոտական ծրագրերում ընդգրկվածության շնորհիվ ձեռք բերված համբավը և պաշտոնական առաջնադասումն ավելի քիչ ազդեցություն ունեն հասարակության և տնտեսության զարգացման վրա, քան գիտահետազոտական արդյունքները: Հետևապես հետազոտողներն առավել մեծ ջանքեր են ներդնում հրապարակումների, քան գիտահետազոտական այլ տեսակի արդյունքների ապահովման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, հետազոտական արդյունքները /հրապարակումներն ավելի ծախսատար են և ներդրումների վերադարձելիության տեսանկյունից՝ պետության համար ավելի քիչ օգտավետ:

Գիտական հետազոտության ոլորտում ԳԱՅ-երի մշակման և գործառնման գործընթացները ՀՀ բուհերի պարագայում դեռևս կամ ոչ լիարժեք են և արդյունավետ, կամ, առհասարակ, բացակայում են: Ընդ որում, նշված խնդիրը վերաբերում է համալսարանների գործունեության, ոչ միայն գիտահետազոտական, այլ նաև այլ ոլորտներին: Ավելին, գիտահետազոտական գործունեության արդյունքների որակի գնահատման գործիքների (օրինակ՝ ազգային կամ միջազգային փորձագիտական գնահատում անցած հրապարակումներ, տեղական ու միջազգային դրամաշնորհներ, հետազոտողների թիվ, ազդեցության գործոններ և այլն) մասնակի կամ անարդյունավետ կիրառումը մույնպես պայմանավորված է համապատասխան ԳԱՅ-երի բացակայությամբ:

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության ոլորտում սահմանված ԳԱՅ-երի (քանակական և որակական) համեմատական վերլուծությունը (ըստ տարիների) ՀՀ բուհերին հնարավորություն կընձեռի՝

- բացահայտելու գիտահետազոտական գործունեության ոլորտում առկա համակարգային հիմնախնդիրներն ու բացթողումները,

• բացահայտված խնդիրների հիման վրա մշակել բարելավման երկարաժամկետ, միջնաժամկետ պլաններ,

• խթանելու միջազգային բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում և ազդեցության բարձր գործակից ունեցող մասնագիտական ամսագրերում գիտական հրապարակումների, միջազգային գիտաժողովներում համալսարանների գիտական անձնակազմի ներգրավվածության թվի բարձրացումը, ինչպես նաև այդ հրապարակումների տեսանկյունից աստիճանը,

• մշակելու և իրականացնելու գիտահետազոտական կազմակերպությունների ռազմավարություններ, նոր գիտական ուղղությունների ու դպրոցների ստեղծման քաղաքականություններ, իսկ դրանց առկայության դեպքում՝ զարգացնելու դրանք,

• հստակեցնելու կրթական ու հետազոտական ծրագրերում գիտահետազոտական բաղադրիչի արտացոլումը,

• նպաստելու գիտական հետազոտության ոլորտի միջազգայնացմանն ու եվրոպական չափանիշներին դրանց առավելագույն համապատասխանեցմանը,

• սերտացնելու գիտական հետազոտության ոլորտում սահմանված ԳԱՅ-երի և այդ ոլորտում համալսարանների մշակած ռազմավարությունների ու քաղաքականությունների կապը,

• ամրապնդելու կրթության և հետազոտության գործընթացների փոխադարձ կապը (հատկապես հաշվի առնելով ՀՀ բուհերում այդ կապի ստեղծման համար անհրաժեշտ ոչ բավարար կառուցվածքային հենքը),

• ընդլայնելու գիտահետազոտական գործունեությունը՝ նպատակաուղղված աշխատանքներ իրականացնելով գերազանցության կենտրոնների ստեղծման, ինչպես նաև ՀՀ-ից դուրս գործող համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ներդրումների ծավալի մեծացման ուղղությամբ:

Գիտական հետազոտության ոլորտում ԳԱՅ-երը կարելի է դասակարգել ըստ որակական և քանակական ցուցանիշների: Որակական ցուցանիշներով չափվում են հետազոտական արդյունքների որակը և հանրային օգուտը, քանակական ցուցանիշներով՝ անմիջականորեն ստացված արդյունքները (ելքերը), որոնք արտահայտվում են հրապարակումների, պատենտների, նախատիպերի, ինչպես նաև նոր արտադրանքների, գործընթացների ու ծառայությունների թվով: Անհրաժեշտ է նշել, որ հրատարակված հետազոտական արդյունքը պետք է պարունակի նորարարություն, իսկ պատենտը ցույց է տալիս, որ նորարարությունը շուկայում իրացվելու ներուժ ունի: Հրապարակումները և դրանց արված հղումները դիտարկվում են որպես

հետազոտական արտադրողականության և գիտահետազոտական արդյունքների ազդեցությունն ապահովող ցուցանիշ: ԳԱՅ-եր սահմանելիս հետազոտական համալսարանները հիմնականում գնահատում են երեք ոլորտներ՝ գիտական հետազոտություն, գիտական անձնակազմի ֆինանսական խրախուսում և գիտելիքի փոխանցում: Գիտահետազոտական ոլորտում որպես ԳԱՅ-եր կարող են սահմանվել՝

• **գիտահետազոտական ակտիվությունը**, որոնցից են արդյունավետության և արտադրողականության ցուցանիշները (հրապարակումները, պատենտները կամ հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ օբյեկտները),

• **գիտական անձնակազմի ֆինանսական խրախուսման ցուցանիշները**, որոնցից են՝ գիտական անձնակազմի համար հատկացված պետական, ծրագրային հետազոտությունների և թեմատիկ ֆինանսավորման ցուցանիշները, գիտական անձնակազմին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները, գիտական շտեմարաններում կամ ազդեցության բարձր գործակից ունեցող ամսագրերում գիտահետազոտական աշխատանքների հրատարակման ֆինանսավորման ցուցանիշները, հրապարակումներին տրամադրված ֆինանսական աջակցության ցուցանիշները,

• **գիտահետազոտական արդյունքների ազդեցությունը և միջազգային տեսանկյունից**, որոնցից են՝ հետազոտության արդյունքների ազդեցությունը սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման վրա, գիտահետազոտական ոլորտում գիտական անձնակազմի ունեցած ձեռքբերումների որակը, հետազոտական համալսարանների և գիտահետազոտողների համբավը (մրցանակներ, տիտղոսներ), հեղինակի անդամակցությունը խմբագրական կազմերին, կազմակերպած գիտաժողովների և աշխատաժողովների թիվը:

Ըստ ՀՀ բուհերի գործունեության ընդհանրական վերլուծության արդյունքների՝ ԳԱՅ-երի մշակման, դրանց միջոցով գործունեության արդյունքների չափման ու գնահատման փորձն ինստիտուցիոնալ մակարդակում առկա է, սակայն նշվածը համատարած ու համակարգային բնույթ չի կրում: Հաշվի առնելով ՀՀ բուհերի գիտահետազոտական գործունեության ոլորտում ԳԱՅ-երի սահմանման, դրանց կիրառմամբ համեմատական վերլուծությունների կատարման և վերլուծության արդյունքների հիման վրա բարելավման արդյունավետ ուղիների մշակման կարևորությունը՝ գիտության և հետազոտության ոլորտներում ՀՀ բուհերի ծավալած գործունեությունը կարելի է չափել հետազոտական համալսարանների որակական և քանակական հետևյալ ԳԱՅ-երի օրինակով.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ	
Գիտական ներուժի և գիտահետազոտական կարողությունների զարգացման ցուցանիշներ	• գիտական անձնակազմի թիվը և հարաբերակցությունը հիմնական դասախոսների թվին • գիտական աստիճաններ ունեցողների թիվը • գիտական կոչումներ ունեցողների թիվը • գիտատեխնիկական աշխատանքներ ու մշակումներ կատարող աշխատողների թվաքանակը՝ ըստ սեռի, տարիքային խմբերի, կրթական մակարդակի, գիտական աստիճանի, գիտական կոչման • գիտահետազոտական աշխատանքներում/ծրագրերում ներգրավված գիտական անձնակազմի թիվը, հաշվեկշիռը և պետական ֆինանսավորման ծավալը • ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունների և գիտական աստիճաններ ստացած հետազոտողների ցուցանիշներ • դասախոսների և գիտական աստիճան ստացածների թվային հարաբերակցությունը • ՀՀ ՈԱԸ-ի 8-րդ մակարդակում ուսումնառողների (ասպիրանտներ, հայցորդներ) և հիմնական դասախոսների թվային հարաբերակցությունը • գիտական մրցույթներում, միջազգային օլիմպիադաներում, ամառային/ձմեռային դպրոցներում, գիտաուսումնական փոխանակության ու շարժունության ծրագրերում գիտական անձնակազմի ներգրավվածության ցուցանիշներ • ուսանողական գիտական կամ երիտասարդ գիտնականների ընկերությունների գործունեության տարեկան ցուցանիշներ
Գիտական արդյունքների ստեղծման, հրատարակման ու տարածման ցուցանիշներ	• գիտական հրապարակումների թիվը՝ ըստ ուղղությունների • տարվա կտրվածքով համալսարանում կազմակերպված գիտաժողովների թիվը • ՀՀ-ում և տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում կազմակերպված գիտաժողովներին ներկայացված զեկուցումների և տպագրված նյութերի թիվը • հրատարակված գիտահետազոտական արդյունքների (գիտամեթոդական աշխատանքներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, (կոլեկտիվ) մենագրություններ և այլ հետազոտական արդյունքներ) թիվը (ներառյալ մենագրություն-հոդված հարաբերակցությունը) • մասնագիտական կամ գրախոսվող ամսագրերում հրատարակված հոդվածների թիվը • գիտական անձնակազմի թիվ - գիտական հրապարակումների թիվ հարաբերակցությունը • գրանցված պատենտների թիվը • անդամակցությունը համաշխարհային գիտական շտեմարաններին ու հետազոտական վճարովի աղբյուրների և ռեսուրսների բաժանորդագրության ծավալները • մասնագիտական կամ գրախոսվող ամսագրերի/հանդեսների խմբագրական կազմերին անդամակցության ցուցանիշներ (գլխավոր խմբագիրների, խմբագիրների տեղակալների կամ ուղորտային խմբագիրների թիվը) • գրախոսված ամսագրերի ազդեցության գործակիցը • հրատարակված գրքերի թիվը • խմբագրված գրքերի թիվը • հանրահասանելի և բաց մատչելիության գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հասանելիության ցուցանիշներ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

	դրանց համամասնությունն ընդհանուր հրատարակված աշխատանքների թվում • գիտաժողովների հրատարակված նյութերի թիվը
	• հետազոտությանը հատկացված ֆինանսավորման ծավալը (ֆինանսական մուտքերի հաշվեկշիռն ընդհանուր բյուջեում՝ ըստ աղբյուրների (պետական մուտքեր, արտաբյուջետային մուտքեր, միջազգային դրամաշնորհային ֆոնդեր, այլ ներդրումներ) • պետական ֆինանսավորմամբ հետազոտական ծրագրերում ընդգրկված դասախոսների/գիտական անձնակազմի թիվը և հաշվեկշիռը, մեկ մասնակցին ընկնող պետական ֆինանսավորման ծավալը • երիտասարդ գիտահետազոտողների հետազոտությունների աջակցության ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման ցուցանիշներ • հետազոտական դրամաշնորհների թիվը • երրորդ կողմ հանդիսացող կառույցների կողմից ֆինանսավորված գիտահետազոտական ծրագրերի թիվը, հաշվեկշիռը և ծրագրերի տևողությունը
Գիտահետազոտական ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի բարելավման ցուցանիշներ	• գիտահետազոտական աշխատանքների կատարման համար նախատեսված ենթակառուցվածքների (ներառյալ մասնագիտացված կառույցների, գիտական գրադարանների, լաբորատորիաների, գիտահետազոտական կենտրոնների, գիտական թանգարանների) թիվը, դրանց բարելավման ցուցանիշները • գիտահետազոտական ֆիզիկական և վիրտուալ միջավայրներն ապահովող գիտատեխնիկական ու նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման ցուցանիշներ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ	
Գիտահետազոտական արդյունքների տեսանելիության ցուցանիշներ	• գիտական անձնակազմի տիտղոսների, կոչումների և մրցանակների թիվը՝ ըստ շնորհած կառույցի (ներառյալ հետազոտական համալսարանների, ազգային ու միջազգային ակադեմիաների, կազմակերպությունների, հիմնադրամների և այլ կառույցների կողմից) • ազգային և միջազգային մակարդակներում գիտական գործունեության վարկանշավորման և տեսանելիության ցուցանիշներ • հղումների թիվը (հրատարակված աշխատանքներին արված հղումների և դրանց հաճախականության ցուցանիշներ)
Գիտական ներուժի և գիտահետազոտական կարողությունների զարգացման ցուցանիշներ	• համալսարանում գործող մասնագիտական խորհուրդներն ու մասնագիտությունները, պաշտպանությունների թիվը • մագիստրոսական կրթական աստիճանում ուսումնառողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման ցուցանիշներ • հետբուհական կրթական աստիճանում ուսումնառողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման ցուցանիշներ • երիտասարդ գիտնականների ձեռքբերումների ցուցանիշներ (օրինակ՝ երիտասարդ գիտնականների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցառումների, գիտական արդյունքներին կատարված հղումների թիվը, նրանց կատարողականի որակական ցուցանիշներ) • կրտսեր հետազոտողների համամասնության ցուցանիշներ (փոխանակման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշներ, հատուկ կարիքներ ունեցող, սոցիալական խոցելի խմբերին

	սլատկանող, փոքրամասնություն հանդիսացող, ինչպես նաև այլ հետազոտական կառույցներից ու զարգացող երկրներից եկած հետազոտողների ցուցանիշներ)
Համագործակցության ցուցանիշներ	• միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերի ղեկավարների և մասնակիցների թիվը, հաշվեկշիռը • տարածաշրջանային և միջազգային գիտաժողովներին մասնակիցների թիվը • արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը • ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կազմակերպված գիտական միջոցառումների հաշվեկշիռն ու տևողությունը (օրինակ՝ այլ կառույցների հետ համատեղ կազմակերպված գիտաժողովներ, գիտահետազոտական ծրագրեր, գործընկերային գնահատումներ և այլն) • գիտական հանրության և մասնագիտական ցանցին (ներառյալ մասնագիտական ակադեմիական և գիտահետազոտական ընկերակցություններ, մասնագիտական ու փորձագիտական հանձնախմբեր, գիտական խորհուրդներ) անդամակցության ցուցանիշներ • հանրության համար կազմակերպված գիտական ու մասնագիտական միջոցառումների ցուցանիշներ (օրինակ՝ հանրային դասախոսություններ և ընթերցումներ, լրատվական և սոցիալական ցանցերում գիտահետազոտական արդյունքների ներկայացումներ) • ուսումնառողների հետ համագործակցության ցուցանիշներ (համահեղինակությամբ կամ համատեղ գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում հրատարակված գիտական արդյունքներ) • հետազոտական աշխատանքներում օգտագործվող ՏՀՏ-ների թիվը և հաշվեկշիռը, ՏՀՏ-ների թիվ - մասնակից հարաբերակցությունը
Կրթական գործընթացներում գիտական արդյունքների ներդրման ցուցանիշներ	• հետազոտության և կրթության կապի ապահովմանն ու ամրապնդմանն ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության, դրանից բխող կանոնակարգերի և ընթացակարգերի (վերա)մշակման և վերանայման ցուցանիշներ • ՊԴ- կազմի բեռնվածության մեջ հետազոտական բաղադրիչի արտացոլման ցուցանիշներ • կրթական և հետազոտական ծրագրերում ՊԴ- կազմի հետազոտական գործունեության իրականացման և գնահատման ցուցանիշներ • հետազոտողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման մեխանիզմների (վերա)մշակման և բարելավման ցուցանիշներ • գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ենթակառուցվածքների բարելավման ցուցանիշներ • հրատարակված գիտական արդյունքների ազդեցությունը տնտեսության վրա (գնահատման ցուցանիշներ)

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեությունը կարելի է սահմանել որպես կրթական գործունեության կարևոր բաղադրիչ, որը ենթադրում է ՊԴ- կազմի ներգրավվածությունը համալսարանի գիտահետազոտական գործընթացներում: Բազմաթիվ հետազոտություններ են կատարվել համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետության

վրա ազդող գործոնները և ԳԱՏ-երն ուսումնասիրելու ուղղությամբ: Գիտական հետազոտության արդյունավետությունը չափվում է գիտական արդյունքի որակով, որի միջոցով հետազոտության ընթացքում կուտակված ու ստեղծված գիտելիքը կարելի է փոխանցել համալսարանների շահակիցներին և այն դարձնել տեսանելի հանրության համար:

